

14667

347.6

0-87

1899

2010

200 L

139

ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ

ԸՍՏ ԾԻՍԻՆ ԱՆԱՅԻՏԱՅ

ՆԿԱՏՄԱՄԻ ԿՏԱԿԱԻ ԿԱՐԳԵԱԼ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՒ ԱՐԳԵԼՄԱՆ
ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՈՒՌԻԹԵԱՆ ԸՆԴ ՄԷՋ ԿԵՆԴՐԱՆԵԱՅ
ԵՒ ՀՐԻՏԱԿԱՅ ԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՅ

معارف نظارت جليله سنك رخصتنامه سيله طبع اولتمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

20, Պապր Ալի ճառագետի, 20

1899

18-0

347.0

0-87

347-6
0-87

ՕՐԵՆՍԳՐՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԸՍՏ ՆԻՍԻ ԱՆԱՅԻՏԱՅ

ՆԿԱՏՄԱՄԲ ԿՏԱԿԱԻ ԿԱՐԳԵԱԼ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՒ ԱՐԳԵԼՄԱՆ
ԵՒ ՊԱՐԳԵԻԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՄԷՋ ԿԵՆԳԱՆԵԱՅ
ԵՒ ՀՐԻՏԱԿԱՅ ԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՅ

ՕՐԷՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԸՍՏ ԾԻՍԻ ԱՆԱՖԻՏԱՅ

ՆԿԱՏՄԱՄԲ ԿՏԱԿԱԻ ԿԱՐԳԵԱԼ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԵՒ ԱՐԳԵԼՄԱՆ
ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԸՆԴ ՄԷՋ ԿԵՆԴԱՆԵԱՑ
ԵՒ ՀՐԻՏԱԿԱՑ ԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՑ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԿՏԱԿԱԻ ԿԱՐԳԵԱԼ ԽՆԱՄԱԿԱԼԻ (1)

ԵՒ

ՆՈՐԻՆ ԳՈՐԾՈՑ ՎՐԱՑ

ՀԱՏԱԾ Ա. — ԽՆԱՄԱԿԱԼԻ ՎՐԱՑ

Յօդ. 1. — Խնամակալն՝ որ կ'ընդունի իրեն յանձնեալ խնամակալութիւնը ի կենդանութեան կտակագրի, չկրնար անոր մահուանէն յետոյ զլանալ կատարելու խնամակալութեան պարտքերը, եթէ կտակագիրն անոր ի խանութիւն տուած չէ հրամարելու ամեն վայրկեան:

Յօդ. 2. — Մերժումն խնամակալութեան, մինչ յայտնուի ի կենդանութեան կտակագրի եւ կը հասնի ի ծանօթութիւն նորին, կ'ազատէ խնամակալը ի ծանրաբեռնութենէ: Անվաւեր է այդ մերժումն, եթէ ծանուցեալ չըլլայ կտակագրին: (2)

Յօդ. 3. — Ի կենդանութեան եւ ծանօթութեամբ կտակագրի խնամակալութիւնը մերժող խնամակալն՝ չկրնար զայն ընդունիլ յետ մահուան նորին:

Յօդ. 4. — Մինչ խնամակալն իւր միտքը չէ յայտնած

(1) խնամակալ Tuteur.
(2) կտակագիր Testateur.

53392-111



39984-67

կաակազիրն մահուանէն առաջ , կրնայ ընտրութիւն ընել (ընդունիլ կամ մերժել խնամակալութիւնը) յետ մահուան :

Նոյնպէս կրնայ ընդունիլ պաշտօնը յետ մերժելոյ զայնս , միայն թէ դատաւորն մերժման վրայ հաստատ չմնայ :

Յօդ. 5. — Լսելեայն ընդունելութիւն խնամակալութեան կը հաւասարի արտայայտեալ ընդունելութեան :

Սոյն ընդունելութիւնը կրնայ ծագիլ վաւերաբար յորմէ եւ է արամադրութենէ՝ զոր ըրած ըլլայ խնամակալն , զոր օրինակ վաճառումն ասն՝ որ պատկանի ժառանգութեան կտակագրի , գնումն իրիք՝ որ օգտակար ըլլայ ժառանգաց , վճարումն պարտուց կամ պահանջումն առնելեաց :

Յօդ. 6. — Խնամակալութիւնն յանձնեալ ի կտակագրէ՝ չըկրնար սեղմիլ ի մասնաւորեալ գործս : Սեղմեալ խնամակալութիւնն կը զօրէ իբրեւ ընդհանուրն :

Նոյնը պէտք է ըսել , եթէ հանգուցեայն յանձնած ըլլայ մէկուն՝ վճարել իւր պարտքերը , եւ միւսոյն՝ պահանջել իւր առնելիքները , թէ՛ մէկն եւ թէ՛ միւսն ընդհանուր խնամակալ կ'ըլլայ :

Յօդ. 7. — Կտակագիրն կրնայ յանձնել խնամակալութիւնը իւր կնոջ՝ մօրն կրտսերոյն ⁽¹⁾ եւ ուրիշ որ եւ է կնոջ կամ իւր ժառանգներէն մէկուն :

Մայրն կամ որ եւ է անձ կրնայ դատաստանական խորհրդական կարգուիլ իւր զաւակացը խնամակալին գործոց հսկելու համար :

Յօդ. 8. — Ի հօրէ անուանեալ խնամակալն նախադաս է հայրենական հաւէն անուանեալ խնամակալին :

Եթէ հայրն՝ իւր օրդւոյն խնամակալութիւնը մօրը յանձնէ , եւ հաստատ մնայ իւր կամաց վրայ մինչեւ ցմահ , հայրական հաւն չկրնար իրաւունք ինչ ունենալ կրտսերոյն խնամակալութեան :

Եթէ հայրն անկտակ մեռնի , հայրական հաւն կը նախադասի մօրն , խնամակալութեան եւ ընտանեաց բարի հօր պարտքերը կատարելու նկատմամբ :

Յօդ. 9. — Խնամակալն պէտք է ըլլայ օսմանեան ⁽²⁾ , ող-

(1) կրտսեր Mineur :

(2) Musulman :

ջամիտ , չափահաս ⁽¹⁾ , արժանի վստահութեան եւ բարի հայր ընտանեաց :

Եթէ կտակագիրն յանձնէ խնամակալութիւնը այնպիսի անձի՝ որ զուրկ ըլլայ այս յատկութիւններէս , դատաւորն կրնայ դանիկայ պաշտօնանկ ընել եւ ուրիշ մը փոխանակել անոր :

Յօդ. 10. — Կտակագիրն կրնայ յետս կոչել խնամակալութիւնը , նաեւ առանց զիտութեան խնամակալի , որ զայն ընդունած ըլլայ :

Յօդ. 11. — Կտակագրէն ընտրեալ խնամակալն չկրնար պաշտօնանկ ըլլալ ի դատաւորէ , եթէ արժանապատիւ եւ ընդունակ ըլլայ կատարելու խնամակալութեան պարտքերը :

Եթէ անընդունակ ըլլայ այդ պարտքերը կատարելու , դատաւորն պիտի յաւելու անոր ուրիշ խնամակալ մըն ալ :

Եթէ դատաւորն համարի որ խնամակալն բացարձակապէս անկարող է կատարելու խնամակալութեան պարտքերը , ուրիշ մը կը փոխանակէ անոր : Եթէ փոխանակեալ խնամակալն վերջստին ստանայ ընդունակութիւնը , նմանապէս վերստին կ'ըստանայ խնամակալութիւնը :

Խնամակալն չկրնար պաշտօնանկ ըլլալ զանգատանօք միոյ կամ բազմաց ի ժառանգաց :

Պաշտօնանկ կ'ըլլայ անիկայ երբոր ապացուցուի անոր վրայ զեղծումն վստահութեան :

Յօդ. 12. — Եթէ խնամակալութիւնն կարգեալ ի հանգուցելոյն , եւ ժառանգք զանց ընեն վճարեալ ժառանգութեան ապացուցեալ պարտքերը եւ ընդունել պահանջները , կամ գործադրել հանգուցելոյն վերջին կամքը , մինչ ժառանգութեան պահանջատէր կամ պարտատէր ըլլայ , կամ մինչ հրիտակ մը կայ , դատաւորն խնամակալ մը կ'անուանէ :

Գատաւորն կրնայ նմանապէս խնամակալ անուանել , եթէ մին ի ժառանգաց կրտսեր է , կամ եթէ հրապարտկաւ ճանչցուած ըլլայ որ կրտսերոյն հայրն մասող է , կամ եթէ , հայրն բացակայ ըլլալով հեռու քաղաք մը , պէտք ըլլայ պահանջել կրտսերոյն պատկանեալ իրաւունք մը , կամ վերջապէս եթէ ժառանգք յամառին չվաճառել ժառանգութեան ինչքը՝ ծանրաբեռնութիւնները վճարելու համար :

Յօդ. 13. — Եթէ հանգուցեայն կամ դատաւորն երկու-

(1) Majeur :

խնամակալ անուանէ, ո՛չ ոք ի նոցանէ կրնայ գործել վաւերաբար առանց հաւանութեան միւսոյն, բայց ի հետեւեալ գործոյ :

Թաղումն հանգուցելոյն, — Գործ արդարութեան յանուն հանգուցելոյն՝ նորին իրաւունքը պաշտպանելու համար, — խնդրել հանգուցելոյն պահանջները, բայց առանց անդորրագիր տալու, եւ վճարումն պարտուց ի նմին տեսակի, — գործադրութիւն տրամադրութեան վերջին կամաց ի չնորհս որոշ աղքատի մը, — գնումն հարկաւոր իրի ի գործածութիւն կրտսերոյն, եւ ընդունելութիւն պարգեւատուութեան իրիք ի չնորհս կրտսերոյն, — դրութիւն կրտսերոյն ի գործ ինչ, — վարձումն ընչից կրտսերոյն, — հատուցումն փոխառութեան եւ ստոյգ իրաց որ աւանդ գրուած են, եւ այնպիսի իրաց՝ որ յափշտակեալ են ի հանգուցելոյն, եւ այնպիսի իրաց՝ որ գնեալ են ի հանգուցելոյն, եւ այնպիսի իրաց որ անկէ գնուած են, բայց այդ գնումն ապաստութեան ենթակայ է, — բաժանումն ընտանեկան իրաց ընդ մէջ տերանց՝ որք հանգուցելոյն հետ միատեղ ստացած են, — վաճառումն նիւթոց՝ որք ենթակայ են սպականութեան, — վերստին ստացումն իրաւանց կամ ցըրուեալ ընչից :

Յօդ. 14. — Եթէ կտակագրէն ընտրեալ երկու խնամակալներէն մէկն միայն ընդունի խնամակալութիւնը՝ անոր մահուանէն յետոյ, դատաւորն կրնայ յաւելուլ անոր դատաստանական խորհրդական մը :

Եթէ դատաւորն յաւելու խնամակալին դատաստանական խորհրդական մը, պահպանութիւնն ընչից խնամակալին կը պատկանի, սակայն անիկայ չկրնար ընել որ եւ է գործ տրամադրութեան առանց միջամտութեան եւ ծանօթութեան խորհրդականին :

Յօդ. 15. — Խնամակալն անուանեալ ի խնամակալէ ընտրելոյ ի հանգուցելոյն՝ է խնամակալ երկուց ժառանգութեանց, երբոր անիկայ անուանեալ ըլլայ նաեւ ի մասնաւորի խնամակալի ժառանգութեան համար : Նոյնը պէտք է ըսել խնամակալին նկատմամբ՝ որ ընտրեալ է ի խնամակալէ անուանելոյ ի դատաւորէ, եթէ խնամակալութիւնն ընդհանուր է :

ՀԱՏԱՄ Բ. — ԽՆԱՄԱԿԱԼԻ ԳՈՐԿՈՑ ՎՐԱՑ

Յօդ. 16. — Եթէ ամենայն ժառանգք կրտսերք են, եւ ժառանգութիւնն ազատ է ի պարտուց եւ ի հրիտակաց, խնամակալն կրնայ օտարացնել շարժական ինչքը, եւս եւ թեթեւինչ փաստու, նաեւ երբոր ժառանգք պէտք չունենան գնոյն :

Խնամակալն չկրնար օտարացնել կրտսերոյն անշարժ ինչքը, եթէ ոչ յետագայ օրինական պատճառներէն մէկուն համար :

1. Եթէ անշարժն վաճառի ի չնորհս կրտսերոյն կրկին գնէն աւելի :

2. Ի դիպուածի պարտուց, որով ծանրաբեռնեալ ըլլայ ժառանգութիւնն, որ եւ չկարենայ շիջանիլ եթէ ոչ վաճառմամբ անշարժի :

Պիտի վաճառի այնքան մասն նորին, որքան կը բաւէ հատուցանելու պարտքը :

3. Ի դիպուածի անորոշ տրամադրութեան վերջին կամաց, եւ ի դիպուածի պակասութեան շարժական ընչից եւ դրամոց ի ժառանգութեան, որով հնար ըլլայ վճարել հրիտակները :

Պիտի վաճառի այնքան մասն՝ որքան կը բաւէ հրիտակը հատուցանելու :

4. Եթէ պէտք կրտսերոյն պահանջեն անշարժի վաճառումը՝ կրնայ օտարանալ այն՝ իրական արժողութեամբ, եւ նաեւ թեթեւ փաստու իւրիք :

5. Եթէ անշարժի պահպանութեան ծախքերն եւ տուրքն եկամտէն աւելի ըլլան :

6. Եթէ անշարժն, տուն կամ խանութ, կործանումն սպառնայ, եւ տապալելու վտանգ տեղի ունենայ :

7. Եթէ անշարժն հզոր անձի ազդեցութեան վտանգի մէջ է : Որ եւ է վաճառումն անշարժի որ կատարուի ի խնամակալէ առանց միոյ ի վերոյիշեալ օրինական պատճառաց, ոչինչ է. ոչ ընչութիւնն չկրնար բժշկուիլ վաւերացմամբ կրտսերոյն, որ չափահաս եղած ըլլայ :

Շարժական կը համարին ծառք, արմաւենիք եւ շինուածք արտաքոյ հիման :

Յօդ. 17. — Եթէ ժառանգութիւնն ազատ է ի պարտուց եւ ի հրիտակաց, եւ ժառանգքն չափահասք են եւ ներկայք, խնամակալն չկրնար օտարացնել ինչ ժառանգութեան՝ առանց կարողութիւն ստանալու անոնցմէ :

Սակայն կրնայ խնդրել հանգուցելոյն պահանջքը եւ ընդունել անոր ուրիշ իրաւունքները եւ ժառանգաց յանձնել զանոնք:

Եթէ համօրէն ժառանգք չափահասք են եւ բացակայք, խնամակալն կրնայ օտարացնել միայն շարժական ինչքը եւ զինը պահել անոնց:

Եթէ ժառանգք չափահաս ըլլալով, անոնցմէ ոմանք ներկայ եւ ոմանք բացակայ ըլլան, խնամակալն կրնայ օտարացնել միայն բացակայից վերաբերեալ բաժինը ի շարժականաց: Իսկ անշարժից բաժինը չկրնար օտարացնել, եթէ ոչ պարտուց համար:

Յօդ. 18. — Եթէ ժառանգութիւնն ծանրաբեռնեալ չըլլայ ամենեւին՝ ոչ պարտուք եւ ոչ հրիտակօք, եւ ժառանգք ըստ մասին կրտսեր ըլլան եւ ըստ մասին չափահաս, խնամակալն կրնայ օտարացնել կրտսերաց պատկանեալ բաժինը, թէ ի շարժականաց եւ թէ յանշարժ ընչից, վերը 16րդ. յօդուածին մէջ մասնաւորեալ պատճառներէն մէկուն համար: Չկրնար նոյն խնամակալն օտարացնել չափահասից բաժինը, բացի դիպուածոյ բացակայութեան նոցա, յորում դիպուածի եւս կրնայ օտարացնել անոնց շարժական բաժինը, բայց ոչ անշարժ բաժինը:

Յօդ. 19. — Երբոր ժառանգութիւնն ծանրաբեռնեալ ըլլայ պարտուք կամ հրիտակօք, եւ մէջտեղ գրամ չըլլայ, եւ ժառանգք չվճարեն իրենց գրամով պարտքերը կամ հրիտակները, խնամակալն ընտրեալ ի հօրէ կրնայ օտարացնել ժառանգութեան բոլոր շարժական եւ անշարժ ինչքը, եթէ նոյն ժառանգութիւնն սպառի ի պարտուց:

Իսկ եթէ չըսպառի ի պարտուց, եւ միայն պատրաստ գրամ չըլլայ մէջտեղը՝ պարտքերը եւ հրիտակները հատուցանելու, խնամակալն կրնայ օտարացնել այնքան մասն յընչից ժառանգութեան, որքան կը բաւէ պարտքերը չիջուցանելու եւ հրիտակները հատուցանելու համար, եւս եւ սոսանց հաւանութեան ժառանգաց:

Խնամակալն կը պարտաւորի սկսիլ օտարացնել շարժականները, թէ պարտքերը չիջուցանելու եւ թէ հրիտակները հատուցանելու համար: Մինչ շարժականքն չբաւեն, կրնայ օտարացնել այնքան մասն անշարժից, որ բաւէ պարտքերը եւ հրիտակները վճարելու: Յաւելեալ մասը չկրնար օտարացնել:

Յօդ. 20. — Հայրական հաւն, կամ անկէ ընտրեալ խնամակալն չկրնար օտարացնել որ եւ է շարժական կամ անշարժ ինչք՝ հանգուցելոյն պարտքերը կամ հրիտակները վճարելու համար:

Թէ մէկն եւ թէ միւսն կրնայ օտարացնել այդպիսի ինչքը՝ պարտքերը վճարելու համար ծանրաբեռնութեամբ ժառանգաց:

Պահանջատեարք հանգուցելոյն կամ հրիտակակտարք կը պարտաւորին իրենց խնդիրը դատաւորին առաջարկել, որ վաճառել պիտի տայ այնքան մասն ժառանգութեան՝ որ կը բաւէ իրենց հատուցանելու համար:

Յօդ. 21. — Խնամակալն ընտրեալ ի մօրէ չկրնար օտարացնել որ եւ է ինչք ստացեալ ի կրտսերէ, բաց յայնցանէ՝ որ անոր պատկանին ի ժառանգութենէ մօրն, թէ շարժական ըլլան այն ինչք եւ թէ անշարժ, թէ ծանրաբեռնեալք եւ թէ ոչ:

Նոյն խնամակալն եւ ոչ իսկ՝ ժառանգութեամբ մօրն կըրտսերէն ստացեալ ինչքը, կրնայ օտարացնել, եթէ հայրն, հայրական հաւն, կամ ի թերութեան նոցին, անոնցմէ ընտրեալ խնամակալն, ներկայ ըլլայ:

Սակայն խնամակալն ընտրեալ ի մօրէ կրնայ տրամադրել նորին ժառանգութեան ընչից վրայօք, եթէ կրտսերն ոչ հայր, ոչ հաւ, եւ ոչ իսկ անոնցմէ ընտրեալ խնամակալ ունենայ՝ Բայց դարձեալ չկրնար նոյն խնամակալն օտարացնել, եթէ ոչ շարժական ինչքը, որոնց զինը կը պարտաւորի պահել, եւ մէկ մասը ծախել որբոց հարկաւոր եղա՞ծ նիւթոց գնման համար, միայն թէ մայրն ծանրաբեռնեալ չըլլայ պարտուք կամ հրիտակաւ իւրիք:

Այս դիպուածիս մէջ խնամակալն՝ ընտրեալ ի մօրէ, կրնայ շարժական կամ անշարժ ինչքը վաճառել, պարտքը եւ հրիտակները հատուցանելու համար: Բայց նոյն խնամակալն ընտրեալ ի մօրէ կամ ուրիշ որ եւ է անձ՝ որ խնամ կը տանի կրտսերոյն, չկրնար օտարացնել անոր անշարժ ինչքը, նաեւ ի դիպուածի համընթացութեան օրինական դատի իրիք:

Անիկայ կրնայ օտարացնել միայն շարժականաց մէկ մասը որչափ հարկաւոր է պիտոյից կրտսերոյն, եւ գնել անտնօրինելի բաները:

Յօդ. 22. — Խնամակալն կրնայ վաճառակաճութիւն ընել կրտսերոյն գրամով, նոյն գրամը պտղաբերել տալու համար:

կրնայ ընել նաև ինչ որ է ի բարին եւ ի շահ կրտսերոյն:

Չկրնար վաճառականութիւն ընել, կրտսերոյն դրամով, ի սեփական հաշիւ իւր:

Յօդ. 23. — Խնամակալն կրնայ վաճառել, նաև թեթև վնասու, կրտսերոյն շարժական ինչքը՝ երրորդի մը, որ օտար է իրեն եւ հանգուցելոյն, եւ գնել երրորդ անձէ շարժական կամ անշարժ ինչք ի հաշիւ կրտսերոյն:

Ոչինչ կրնայ վաճառել այնպիսուն՝ որ չկրնար վկայել իրեն համար, եւ ոչ կրնայ վաճառել ինչ՝ հանգուցելոյն ժառանգի մը, եթէ ոչ իրական օգտիւ կրտսերոյն:

Խնամակալն անուանեալ ի դատարէ որ եւ է գիպուածի մէջ չկրնար վաճառել կրտսերոյն ինչքը իւր նախահարց կամ իւր սերնդոց, եւ ոչ իսկ գնել ինչ անանցմէ ի հաշիւ կրտսերոյն:

Յօդ. 24. — Խնամակալն կրնայ վաճառել պայմանաժամաւ կրտսերոյն ինչքը, միայն թէ պայմանաժամն չափազանց չըլլայ, եւ գնողն կարող ըլլայ վճարել, եւ յսպաղման կամ զլացման վտանգ չըլլայ ի ժամանակի վճարման:

Յօդ. 25. — Խնամակալն ընտրեալ ի հօրէ կրնայ վաճառել կրտսերոյն՝ իւր ինչքը, եւ գնել ի հաշիւ իւր անոր ինչքը, միայն թէ պորձողութեան մէջ իրական օգուտ մը ըլլայ կրտսերոյն:

Օրուան տեղի ունի, ի գիպուածի անշարժ ընչից կրկնապատկութեամբ գնոյն, եթէ խնամակալն գնէ, կիսով գնոյն, եւ թէ վաճառէ կրտսերոյն:

Ի գիպուածի շարժականաց, օրուան տեղի ունի կիսով առաւել քան զգինն, եթէ խնամակալն գնէ, եւ երրորդ մասամբ նուազ քան զգինն, եթէ վաճառէ կրտսերոյն:

Դատարէն անուանեալ խնամակալն չկրնար գնել ինչ ի կրտսերոյն, եւ ոչ իսկ վաճառել ինչ անոր իւր սեփական ինչքէն:

Յօդ. 26. — Խնամակալն չկրնար գործածել կրտսերոյն ինչքը իւր պարտուց հատուցման համար, եւ ոչ իսկ փոխ տալ անոր կամ փոխ առնուլ անկէ: Չկրնար եւս եւ տալ իւր ինչքը յերաշխաւորութիւն ի շնորհս կրտսերոյն, եւ ոչ իսկ կրնայ յերաշխաւորութիւն առնուլ ի շնորհս իւր՝ կրտսերոյն ինչքը. սակայն կրնայ տալ զանոնք յերաշխաւորութիւն պարտուց իրիք կրտսերոյն կամ հանգուցելոյն եւ իւր իսկ պահանջանաց, նոյնպէս նաև կրնայ ընդունել զբաւական ինչ կամ երաշխաւոր կրտսերոյն կամ հանգուցելոյն պահանջը սպանովցնելու համար:

Յօդ. 27. — Խնամակալն կրնայ կարգել դայ օք ի փոխանորդ, որպէս զի ընէ, ինչպէս ինքն, ամենայն ինչ նկատմամբ ընչից կրտսերոյն:

Մասն խնամակալի կամ կրտսերոյն կը վերջացնէ յանձնաբարութիւնը (խնամակալութեան պաշտօնը):

Յօդ. 28. — Խնամակալն չկրնար ազատել հանգուցելոյն պարտատէրը, եւ ոչ իսկ թողուլ անոր բոլորն կամ մասն ինչ պարտուց, եւ ոչ պայմանաժամ շնորհել անոր, եթէ պարտքն իրմէ դաշնադրեալ չըլլայ:

Եթէ դաշնադրութիւնն նոյն իսկ խնամակալէ եղած ըլլայ, կրնայ անիկայ՝ ընդ պատասխանատուութեամբ իւրով, թողուլ կամ պայմանաժամ շնորհել պարտատեւան, կամ նաև ազատել զանիկայ:

Յօդ. 29. — Խնամակալն չկրնար իրաւախոն ըլլալ հանգուցելոյն կամ կրտսերոյն պահանջանաց համար, որ յեցեալ ըլլայ վկայութեան վրայ, եւ զոր ուրանայ պարտատէրն: Չկրնար իրաւախոն ըլլալ կորստեամբ, եթէ պահանջն ապացուցեալ ըլլայ արժանահաւատ վկայներէն, կամ ճանչցուած ըլլայ պարտատէրէն, կամ յառաջ գայ ի վճող: Եթէ հանգուցեալն կամ կրտսերն յայտնի կամ վճող ծանուցեալ պարտք մը ունի, խնամակալն կրնայ իրաւախոն ըլլալ ճիշդ գումարոյ հիման վրայ:

Յօդ. 30. — Ոչինչ է յայտարարութիւն խնամակալի ի ճանաչումն պարտուց եւ իրի կամ հրիտակի իրիք ծանրաբեւոնութեամբ հանգուցելոյն:

Յօդ. 31. — Եթէ մին ի ժառանգաց պարտք մը ճանչնայ ի ծանրաբեւոնութիւն հանգուցելոյն, ասկէ արդիւնք ինչ յառաջ չգար, եթէ ոչ նկատմամբ անձին նորին, ինքն միայն կը բեռնաւորի մասամբ ճանչցած պարտուց ըստ համեմատութեան իրեն ինկած ժառանգական բաժնին:

Եթէ ճանչնայ հրիտակ մը որ ժառանգութեան երրորդ մասին պատասխանէ, ինքն միայն կը պարտաւորի ըստ երրորդ մասին՝ իրեն ժառանգական բաժնէն:

Յօդ. 32. — Պէտք է որ խնամակալն բանաւորապէս վարուի կրտսերոյն ապրուստի ծախուց նկատմամբ, առանց ազահութեան եւ առանց չոպլութեան:

Եթէ կրտսերոյն ապրուստին համար դատարէն կարգեալ գումարն անբաւական ըլլայ, խնամակալն կրնայ լրացնել:

Յօդ. 33. — Երրորդ կրտսերն ապրուստի միջոց չունենաց:

կամ ունեցած միջոցն սնտրամազրելի ըլլալով խնամակալն իւր սեփական գրամով անոր խնամք տարած ըլլայ, իրեն ծախուց հատուցումը չկրնար պահանջել, եթէ կանխաւ ծանուցած չըլլայ վկայից առջեւ որ այդ ծախքը կ'ընէ իրեն հատուցուելու գիտաւորութեամբ: Յայսմ գիպուածի իրաւունք կը ստանայ ընդդէմ կրտսերոյն, միայն թէ ապրուստէ զուրկ կրտսերոյ մը պարտապան ազգական չըլլայ:

Յօդ. 34. — Եթէ խնամակալն հանդուցելոյն վերաբերեալ պարտք մը վճարէ առանց հիմնեալ ըլլալու՝ խնդրողէն ցոյց տրուած անձանց վկայութեան վրայ եւ առանց վճռով ապացուցուելու, կամ առանց ճանչցուելու ի ժառանգուց, ինքն անձամբ պատասխանատու է վճարման, եթէ չունենայ նոյն ինքն ապացոյց ինչ այնք պարտուց, եւ եթէ ժառանգը երգնուն անոր ծանօթութիւն չունենալնուն:

Յօդ. 35. — Եթէ խնամակալն կարօտ ըլլայ, պէտք է որ անոր՝ գործոյն համար թոշակ մը վճարուի, որ հաւատարի սովորական թոշակի, սպա թէ ոչ պէտք չէ ամենեւին անոր թոշակ տալ:

Յօդ. 36. — Կրտսերքն երբոր չափահաս ըլլան, կրնան սպահանջել խնամակալէն իւր մատակարարութեան համարը: Նոյն իսկ կրտսերքն կը հատուցանեն համարատուութեան դատաստանական ծախքը:

Խնամակալն չկրնար հարկադրուիլ իւր մատակարարութեան ժամանակ եղած ծախուց մանրամասն հաշիւը տալու: Իրեն խոստովանութիւնն՝ երզմամբ հաստատեալ, բաւական է, եթէ նորին պատին չէ կասկածելի: Ի ներհակ գիպուածի կը պարտաւորի մանրամասն հաշիւ տալ: — Այս նպատակաւ դատաւորն կրնայ երկիցս եւ երկիցս յատեան կոչել զանիկայ, սպառնալ անոր, բայց չկրնար բանտարկել, թէպէտեւ յամառի զլանալ մանրամասն հաշիւ տալու:

Երզումն նորին բաւական է մինչ գործքն յայտ յանդիման սուտ չհանեն իւր ընթացից նկատմամբ ըրած խոստովանութիւնները, որոնք խնամակալի օրինական պարտուց մէջ կը պարունակուին:

Յօդ. 37. — Եթէ խնամակալն մեռնի առանց ցոյց տալու որքին ինչք, ժառանգութիւնն նորին չէ պատասխանատու:

Ի հակառակ գիպուածի, իրաւունք ունի որքն, չափահաս ըլլալէն յետոյ, պահանջել իւր ինչքը, եթէ կեցած են ի բնական:

տեսակի, կամ հատուցանել առ պարտութիւնը ի ժառանգութիւնէ խնամակալին, եթէ սպառած են:

Յօդ. 38. — Երզումն խնամակալի բաւական է այն ամէն բանի համար, որ խնամակալին օրինական պարտուց պատկանեալ գործոց կը վերաբերի:

Յօդ. 39. — Երզումն խնամակալին չէ բաւական այն ամէն բանի համար, որ խնամակալին օրինական պարտուց պատկանեալ գործոց չվերաբերի: Կը պարտաւորի վկայներով ապացուցանել իւր հաստատութիւնները:

Յօդ. 40. — Հաստատութիւնն խնամակալի մերժեալ է, երբոր գործք սուտ հանն զայն յայտնապէս:

Յօդ. 41. — Հաստատութիւնն խնամակալի ընդունելի է այն ամէն բանի համար, որ կը պատկանի կրտսերոյն կամ հանդուցելոյն պատճառաւ եղած ծախուց բայ ի քանի մի գիպուածոց, որոնց մէջ կը թուին:

Եթէ խնամակալն պնդէ որ հանդուցելոյն մէկ պարտքը վճարած ըլլայ առանց վճռոյ կամ զայն վճարած ըլլայ իւր սեփական գրամովն. — կամ թէ կրտսերն գործածած ըլլայ, իւր տղայութեան ժամանակ, օտարի ինչքը, եւ թէ խնամակալն տիրոջ վնասը հատուցած ըլլայ իւր կամ որքին գրամովն. — կամ թէ ինքն ծախք ըրած ըլլայ մէկ որոշ անձի մը ապրուստին համար, որուն հետ կրտսերն չկրնար ամուսնանալ. — կամ թէ երկրագործութեան անյարմար ժամանակ կրտսերոյն երկիրներուն տուրքը վճարած ըլլայ. — կամ թէ կրտսերն, վաճառականութիւն ընելու հրաման առած ըլլալով, պարտք ըրած ըլլայ եւ ինքն այդ պարտքը վճարած ըլլայ. — կամ թէ կրտսերն ամուսնացած ըլլայ մէկ որոշ եւ անկեալ կնկան մը հետ, եւ ինքն սեփական գրամովն օժիտը տուած ըլլայ կնկան. — կամ թէ ինքն վաճառականութիւն ըրած ըլլայ կրտսերոյն գրամովն եւ վստակ ըրած ըլլալով, նոյն վստակին մէկ մասը պահանջէ պարտուակաւ զովորութեան ընկերի:

Այս ամէն գիպուածոց մէջ, եթէ կրտսերն չափահաս ըլլալով հակառակի խնամակալին ըսածներուն, սա ինքն պատասխանատու է իւր գործոց, միայն թէ վկայներով չապացուցանէ իւր պահանջները:

Յօդ. 42. — Խնամակալն պէտք չէ որ յանձնէ ինչքը կըրտսերոյն եւ կրտսերուհւոյն, թէպէտեւ չափահաս ըլլան, մինչեւ որ զիրենք չփորձէ ճանչնալու համար անոնց փորձառութիւնը:

ի մատակարարութեան եւ ի բարի արամադրութեան ընչից՝

Եթէ յայտնուի որ անոնք ընդունակ են նոյն ինչքը մատակարարելու եւ բանաւորապէս անոնց վրայօք արամադրելու, յանձնէ անոնց, ապա թէ ոչ չյանձնէ:

Յօդ. 43. — Եթէ չափահաս եղած կրտսերն բանաւոր է, իւր գործողութիւններն իրենց կատարեալ արդիւնքը յառաջ կը բերեն, եւ նոյն ինքն է պատասխանատու հետեւութեանց: Հայրն կամ խնամակալն չեն կրնար պնդել որ անիկայ արգիւման (1) վիճակի մէջ ըլլայ, մինչ զատաւորն իրականապէս արգելքը չէ վճած:

Յօդ. 44. — Եթէ չափահաս եղած կրտսերն բանաւոր չէ, ինչքն իրեն չպիտի յանձնուին տիոց քսաներորդ հինգերորդ տարին չըրացուցած, ի բաց առեալ զգիպուածն, յորում ապացուցուի նորին ընդունակութիւնն ի բարի մատակարարութիւն եւ ի բարի արամադրութիւն այս տարիքէն առաջ:

Յօդ. 45. — Խնամակալն՝ եթէ յանձնէ ինչքը չափահաս կրտսերոյն, մինչդեռ յոռի մատակարար մըն է անիկայ, սոյնը գիտնալով, յանձնեալ ընչից համար պատասխանատու է:

Նոյնը պէտք է ըսել ի դիպուածի, յորում յանձնուին ինչք այնպիսի կրտսերոյն՝ որ չափահաս ըլլալէն առաջ ճանչցուած է յոռի մատակարարութեամբ, եւ որ յարբունս հասած է առանց նշան ստալու ընդունակութեան:

Յօդ. 46. — Եթէ չափահաս ըլլալէն առաջ յայտնուի ընդունակութիւնն ի բարի մատակարարութիւն, խնամակալն պատասխանատու չէ կրտսերոյն յանձնեալ ընչից նկատմամբ, եթէ նոյն ինչք կորսուին անոր ձեռքը:

Յօդ. 47. — Եթէ չափահաս եղած կրտսերն պնդէ որ ընդունակ է ի բարի մատակարարութիւն, եւ խնամակալն ուրանայ սոյն ընդունակութիւնը, չկրնար բռնաբարել նոյն խնամակալն ինչքը կրտսերոյն յանձնելու, եթէ ոչ յետ ապացուցման ընդունակութեան նորին վճով զատաւորի:

Եթէ յետ վճողական ապացուցման ընդունակութեան կրտսերոյն, եւ յետ պաշտօնական ազգարարութեան, խնամակալն զլանայ յանձնել կրտսերոյն իւր ինչքը, սոյնը հնարաւոր ըլլալով, նոյն խնամակալն պատասխանատու է կորստեան ընչից ի ձեռս իւր, յետ պաշտօնական ազգարարութեան:


(1) Interdiction.

Գ Լ Ո Ւ Խ Բ :

ԱՐԳԵԼՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Ե Ի

ԶԱՓԱՀԱՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ



ՀԱՏԱԾ Ա. — ԱՐԳԵԼՄԱՆ ՎՐԱՅ

Յօդ. 48. — Արգելման կ'ենթարկուի կրտսերն, չափահասն ի վիճակի կատաղութեան եւ խենթութեան կամ անկարութեան, անառակն եւ պարտատէրն ի վիճակի անանկութեան:

Յօդ. 49. — Ապախտ են ամենայն քաղաքական գործք կրտսերոյն՝ որ բանաւորութեան հասակին չէ հասած, ինչպէս նաեւ խելագարին՝ որ ժամանակի լուսաւոր միջոցներ չունի:

Վաւեր են քաղաքական գործք խելագարի մինչ գործուին ի լուսաւոր միջոցս ժամանակի:

Յօդ. 50. — Յարմատոց ապախտ են քաղաքական գործք կրտսերոյն գործեալք ի հասակի բանաւորութեան կամ չափահասի ի վիճակի խելագարութեան, եթէ նոյն գործք վնասակար ըլլան նմին իսկ կրտսերոյն կամ խելագարին, թէպէտ եւ հաւանեալ ըլլան, չի բնական կամ ի նարկեալ խնամակալէ:

Յօդ. 51. — Քաղաքական գործք կրտսերոյն՝ գործեալք ի հասակի բանաւորութեան, եւ չափահասի ի վիճակի խելագարութեան, որ կրնան իրենց նպատաւոր կամ վնասակար ըլլալ, ենթարկեալ են վաւերացուման խնամակալի, երբոր գործն կրնայ հատատու թիւն ստանալ վաւերացմամբ:

Յօդ. 52. — Կրտսերն քաղաքականապէս պատասխանատու է անձանց կամ ստացուածոց նկատմամբ գործած ոճրոց եւ յանցանաց համար: Ինքն ուղղակի պարտաւորեալ է վնասուց եւ շահուց:

Չափահասն ի վիճակի խելագարութեան նոյն իսկ կրտսերոյն կացութեան մէջ է:

Յօդ. 53. — Կրտսերն, ինչպէս նաեւ չափահասն ի վիճակի

ի մատակարարութեան եւ ի բարի արամադրութեան ընչից:

Եթէ յայտնուի որ անոնք ընդունակ են նոյն ինչքը մատակարարելու եւ բանաւորապէս անոնց վրայօք արամադրելու, յանձնէ անոնց, ապա թէ ոչ չյանձնէ:

Յօդ. 43. — Եթէ չափահաս եղած կրտսերն բանաւոր է, իւր գործողութիւններն իրենց կատարեալ արդիւնքը յառաջ կը բերեն, եւ նոյն ինքն է պատասխանատու հետեւութեանց: Հայրն կամ խնամակալն չեն կրնար պնդել որ անիկայ արդիւման (1) վիճակի մէջ ըլլայ, մինչ զատաւորն իրականապէս արգելքը չէ վճած:

Յօդ. 44. — Եթէ չափահաս եղած կրտսերն բանաւոր չէ, ինչքն իրեն չպիտի յանձնուին տիոց քսաներորդ հինգերորդ տարին չըրացուցած, ի բաց առեալ զդիպուածն, յորում ապացուցուի նորին ընդունակութիւնն ի բարի մատակարարութիւն եւ ի բարի արամադրութիւն այս տարիքէն առաջ:

Յօդ. 45. — Խնամակալն՝ եթէ յանձնէ ինչքը չափահաս կրտսերոյն, մինչդեռ յոռի մատակարար մըն է անիկայ, սոյնը գիտնալով, յանձնեալ ընչից համար պատասխանատու է:

Նոյնը պէտք է ըսել ի դիպուածի, յորում յանձնուին ինչք այնպիսի կրտսերոյն՝ որ չափահաս ըլլալէն առաջ ճանչցուած է յոռի մատակարարութեամբ, եւ որ յարբունս հասած է առանց նշան տալու ընդունակութեան:

Յօդ. 46. — Եթէ չափահաս ըլլալէն առաջ յայտնուի ընդունակութիւնն ի բարի մատակարարութիւն, խնամակալն պատասխանատու չէ կրտսերոյն յանձնեալ ընչից նկատմամբ, եթէ նոյն ինչք կորսուին անոր ձեռքը:

Յօդ. 47. — Եթէ չափահաս եղած կրտսերն պնդէ որ ընդունակ է ի բարի մատակարարութիւն, եւ խնամակալն ուրանայ սոյն ընդունակութիւնը, չկրնար բռնաբարել նոյն խնամակալն ինչքը կրտսերոյն յանձնելու, եթէ ոչ յետ ապացուցման ընդունակութեան նորին վճռով զատաւորի:

Եթէ յետ վճռողական ապացուցման ընդունակութեան կրտսերոյն, եւ յետ պաշտօնական ազդարարութեան, խնամակալն զլանայ յանձնել կրտսերոյն իւր ինչքը, սոյնը հնարաւոր ըլլալով, նոյն խնամակալն պատասխանատու է կորստեան ընչից ի ձեռս իւր, յետ պաշտօնական ազդարարութեան:

(1) Interdiction.

Գ Լ Ո Ւ Խ Թ .

ԱՐԳԵԼՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Ե Ի

ՉԱՓԱՀԱՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ



ՀԱՏԱԾ Ա. — ԱՐԳԵԼՄԱՆ ՎՐԱՅ

Յօդ. 48. — Արգելման կ'ենթարկուի կրտսերն, չափահասն ի վիճակի կատաղութեան եւ խենթութեան կամ անկարութեան, անառակն եւ պարտաաէյն ի վիճակի սնանկութեան:

Յօդ. 49. — Ապախտ են ամենայն քաղաքական գործք կրտսերոյն՝ որ բանաւարութեան հասակին չէ հասած, ինչպէս նաեւ խելագարին՝ որ ժամանակի լուսաւոր միջոցներ չունի:

Վաւեր են քաղաքական գործք խելագարի մինչ գործուին ի լուսաւոր միջոցս ժամանակի:

Յօդ. 50. — Յարմատոց ապախտ են քաղաքական գործք կրտսերոյն գործեալք ի հասակի բանաւարութեան կամ չափահասի ի վիճակի խելագարութեան, եթէ նոյն գործք մնասակար ըլլան նմին իսկ կրտսերոյն կամ խելագարին, թէպէտ եւ հաւանեալ ըլլան, չի բնական կամ ի հարկեալ խնամակալէ:

Յօդ. 51. — Քաղաքական գործք կրտսերոյն՝ գործեալք ի հասակի բանաւարութեան, եւ չափահասի ի վիճակի խելագարութեան, որ կրնան իրենց նպատաւոր կամ մնասակար ըլլալ, ենթարկեալ են վաւերացուցման խնամակալի, երբոր գործն կրնայ հաստատութիւն ստանալ վաւերացմամբ:

Յօդ. 52. — Կրտսերն քաղաքականապէս պատասխանատու է անձանց կամ ստացուածոց նկատմամբ գործած ոճրոց եւ յանցանաց համար: Ինքն ուղղակի պարտաւորեալ է մնասուց եւ չահուց:

Չափահասն ի վիճակի խելագարութեան նոյն իսկ կրտսերոյն կացութեան մէջ է:

Յօդ. 53. — Կրտսերն, ինչպէս նաեւ չափահասն ի վիճակի

խնդրաբարութեան, պարտաւորեալ չէ առանց հաւանութեան խնամակալի փոխ առած գումարոց համար, եւ ո՛չ իրեն քով դրուած աւանդին կամ անօթատուչութեան համար, եւ ո՛չ իսկ առանց այդ հաւանութեան իրեն վաճառեալ իրի համար, միայն թէ խնդիրն չըլլայ անձի կամ կենդանի էակի նկատմամբ՝ որ իրեն յանձնուած ըլլայ: Կրտսերն պարտաւորեալ է՝ խնամակալին հաւանութեամբ իրեն յանձնուած աւանդին արժողութեան, համար:

Յօդ. 54. — Արդելումն կ'ըլլայ ի գատաւորէ ընդդէմ որոյ եւ է ազատ չափահասի, որոյ մոխողութիւնն ապացուցեալ ըլլայ վիայից միջոցաւ:

Արդելեայն չկրնար գործել վաւերականապէս որ եւ է գործ լուծանելի ի բնէ կամ ոչնչանալի վասն թերութեան զգծուութեան: Գործոց նկատմամբ արգելեալն կրտսերոյն կը նմանի:

Գործք գործեալք արգելեալ անձէ, ի միջոցի արգելման անխաւեր են, եթէ հրամանաւ դատաւորի գործեալ չըլլան:

Արդելմանէն առաջ գործեալ գործքն վաւեր եւ ենթակայ են արդեանց:

Յօդ. 55. — Մտխողութեան պատճառաւ արգելեալ անձն կրնայ հաւանիլ այն գործոց՝ որք ի բնէ անլուծանելի եւ վաւեր են, թէպէտ եւ կատակի համար գործեալ ըլլան: Այսպէս կրնայ ամուսնանալ ապահարզան ընել եւ անուցանել այն անձինքը՝ որոնց պարտաւորի թուակ կտպել ապրուստի համար:

Այնպիսին լուծեալ է ի հայրական իշխանութենէ:

Կրնայ վաւերականապէս որ եւ է յայտարարութիւն ընել ի ճանաչումն անձնական պարտուց եւ խոստովանիլ ո՞՞ր ինչ՝ որոյ պատուհանն պատժական է կամ դրամական եւ պարգեատուութիւն ընել եւ բարեգործական հրիտակ շնորհել մինչև ցերրորդ մասն ընչից իւրոց, եթէ ժառանգ ունի:

Յօդ. 56. — Պէտք է արգելու ի գործածութենէ պաշտաման իւրեանց չարմիա իրաւագէտը (Միւլթիին)՝ որ ստայօդ ձեւեր կը սորվեցնէ կողմանց կամ սուտ մեկնութիւն (Ֆէթվա) կուտայ, նոյնպէս պէտք է արգելուլ տգէտ բժիշկը եւ անաւկացեալ գործակատարը եւ այն անձինքը՝ որոնք մենավաճառութիւն կ'ընեն ճարտարական արհեստի մը:

Յօդ. 57. — Խնամակալն կրնայ յիշխանութենէ ազատ կացուցանել կրտսերը եւ կարողութիւն տալ անոր վաճառականութիւն ընելու, եթէ նկատէ որ ձեռնհաս եւ ընդունակ է ա-

նիկայ ճանչնալու վաճառման մէջ բնատէրութեան փոխադրութիւնը եւ գնման մէջ նորին ստացումը, եւ կրնայ զանազանել բանաւոր անձանց հանդիպած թեթեւ վնասը ծանր վնասէն:

Յօդ. 58. — Վաճառականութիւն ընելու կարողութիւն ստացած կրտսերն կրնայ վաճառել եւ գնել նաեւ ծանր վնասով, գործակալ կարգել վաճառելու եւ գնելու համար, զրաւական տալ կամ առնուլ, անօթատուչութեան (1) հաւանիլ, երկիրները վարձու առնուլ կամ տալ ի գաղթականութիւն կամ ի սակ, յայտարարութիւն տալ ի ճանաչումն պարտուց կամ աւանդի իրիք, գնոյն մէկ մասը թողուլ ծածուկ կամ պարտաւորի թերութեանց համար, հաւանիլ Մոնապաիի (որ է օգուտ պատճառեալ ի շահուց կամ յանձնական նկատմանց), պարտապանին պայմանաժամ շնորհել, իրաւախոհ ըլլալ:

Յիշխանութենէ ազատեալ եւ վաճառականութիւն ընելու կարողութիւն ստացած կրտսերն չկրնար առանց հաւանութեան խնամակալի հաւանիլ ի փոխատուութիւն սպառելի եւ ի պարգեատուութիւն եւ յապահովագրութիւն եւ ո՛չ իսկ ամուսնանալ:

Խնամակալէն հաղորդեալ կարողութիւնն չարգելուր կըրտսերոյն արամաղել կարողութիւն ստացած անձանց ինչքը:

39984-67

ՀԱՏԱԾ Բ. — Բանաւարութեան(2), Հասակին եւ Երիտասարդութեան(3) եւ Չափահասութեան(4) վրայ

Յօդ. 59. — Բանավարութեան հասակն՝ թէ՛ արական եւ թէ՛ իգական սեռի համար, սահմանեալ է գէթ եօթնեփորդ տարիքն. այս հասակին մէջ կը զաղարի Հատանանն արուին համար եւ անիկայ ելած է ի Հատանանէ:

Երիտասարդութեան հասակն արուին համար երկուտասաներորդ տարին է: Դուստրն երկուտասարդ է երբոր լրացնէ ին-

(1) Comodato.

(2) Agø de raison.

(3) Adolescence.

(4) Majorité.



ներորդ տարին, եւ այս հասակին մէջ կը դադարի Հատանանն :

Յօդ. 60. — Արբունք արուին կը ծագին ֆիզիքական նշաններէն, որ կը յայտնեն սոյն վիճակը :

Նոյնը պէտք է ըսել դատեր նկատմամբ, նկատողէթեան առնելով սնոր սեռը յայտնող մասնաւոր նշանները :

Ի թերութեան այս նշանաց, թէ՛ մէկն եւ թէ՛ միւսո յարբունս հասեալ կը համարի յետ լրանալոյ հնգետասաններորդ տարին :

Յօդ. 61. — Մինչ յարբունս հասեալ է մէկ եւ միւս սեռի զուակն՝ կը դադարի խնամակալութիւնն :

Թէ՛ մէկն եւ թէ՛ միւսն այդ հասակի մէջ կրնայ արամադրել իրեն անձին վրայօք : Չեն կրնար բռնադատուիլ անոնք ամուսնութեան, միայն թէ խելագարութեան կամ կատողութեան վիճակի մէջ չգտնուին :

Սակայն խնամակալութիւնն չդադարի նկատմամբ ընչից յարբունս համնելով հասակն : Սոյնն կը դադարի չափհասութեամբ, որ կը յայտնուի ի բաւականութենէ ի բարի մատակարարութիւն :

Յօդ. 62. — Մէկ եւ միւս սեռի կրտսերն չկրնար, յարբունս համնելէն առաջ, ընտրողութիւն ընել ընդ մէջ հօր եւ մօր, որ բաժանեալ ըլլան ապահարզանիւ :

Յօդ. 63. — Եթէ յարբունս հասեալ կրտսերն միանգամայն չափահաս եւ ընդունակ ըլլայ կառավարելու իւր անձը, կրնայ ընտրողութիւն ընել ընդ մէջ հօր եւ մօր, եւ եւս առանձին ապրիլ :

Յօդ. 64. — Յարբունս հասեալ դուստրը, թէ կոյս ըլլայ թէ ոչ, չէ հնար ինքնիշխան թողուլ, որ եւ ընտրողութեան իրաւունք չունի :

Հօր կամ հայրական հաւուն կ'իյնայ պահել դայն իրեն իշխանութեան ներքեւ :

Իուստրն կոյս, մինչ յառաջացեալ է ի հասակի եւ ճոխացեալ ամենայն յատկութեամբ բանականութեան եւ առաքինութեան, չկրնար բռնադատուիլ բնակելու այնպիսոյն հետ՝ որ իրեն վրայ հայրական իշխանութիւն կը գործածէ : Նոյնը պէտք է ըսել դատեր նկատմամբ, զոր հնար է ինքնիշխան թողուլ եւս եւ կոյս չըլլալով :

Յօդ. 65. — Պարզեւատուութիւնն կատարեալ է հաւանութեամբ պարզեւատուին եւ ընդունելութեամբ պարզեւառուին :

Առումն իրի ի կողմանէ պարզեւառուին կը հաւասարի նորին ընդունելութեան :

Յօդ. 66. — Որպէս զի պարզեւատուութիւնն վաւեր ըլլայ, պէտք է ազատ ըլլալ եւ չափահաս եւ ողջամիտ եւ տէր պարզեւեալ իրի :

Յօդ. 67. — Բնատէրութիւն պարզեւեալ իրի պարզեւառուին չփոխադրուիր, եթէ ոչ իրական եւ ամբողջ տուչութեամբ :

Եթէ իրն պարզեւառուին ձեռքը գտնուի, բնատէրութիւնն կը փոխադրուի միակ գործով, առանց հարկ ըլլալու նորոյ տուչութեան, միայն թէ պարզեւառուին հաւանած ըլլայ պարզեւատուութեան :

Յօդ. 68. — Ամէն բնատէր՝ որ ընդունակ է տրամադրել իւր ինչքը, կրնայ պարզեւել բոլորն կամ մասն ինչ ընչից իւրոց միում ի նախահարց կամ ի սերնդոց իւրոց, եւ օտարի, եւս եւ տարբեր կրօնք դաւանող անձին, միայն թէ պահուին պարզեւատուութեան վաւերականութեան համար պահանջեալ թէութիւնք :

Յօդ. 69. — Կրնայ պարզեւատուութեան առարկայ ըլլալ վայելումն պողոց⁽¹⁾ ի շնորհս պարզեւառուին ի կենդանութեան նորին, պայմանաւ յետո դարձնելու զայն պարզեւատուին կամ անոր ժառանգաց, եթէ պարզեւատուն վախճանած է :

Պարզեւատուութիւնն պատճառաւ մահուան ոչինչ է : Պարզեւեալ իրք՝ պարզեւատուին ժառանգաց կը պատկանին, եւ կրնան պարզեւատուին քով ձգուիլ անօթատուչութեան⁽²⁾ տիտղոսիւ :

ՀԱՏԱԾ Բ. — Պարզեւելի իրաց վրայ

Յօդ. 70. — Պարզեւատուութիւնն անբաժան մասին իրի՝ որ բնութեամբ անբաժանելի է, կը փոխադրէ բնատէրութիւնը տուչութեամբ, միայն թէ անբաժան մասն այն ծանուցեալ եւ որոշեալ ըլլայ :

Անբաժանելի կը համարի իրն այն՝ որ բաժանումն չտանիր կամ թէ բաժանումն անյարմար կ'ընծայէ իրը յոր եւ է գործա-

(1) Usufruit.
(2) Commodatum.

ծութիւն , կամ անյարմար կ'ընծայէ իրը ի դործածութիւն՝ առ որ սահմանեալ էր նախ քան զբաժանումն :

Յօդ. 71. — Պարգեւատուութիւնն անբաժան մասին բաժանելի իրի, թէպէտեւ ըլլայ ի նպաստ անձին՝ որ միանգամայն բնատէր է, բնատէրութիւնը չփոխադրեր, եւս եւ տուչութեամբ, միայն թէ պարգեւեալ մասն բաժնուած եւ դատուած չըլլայ չպարգեւեալ մասէն , եւ հաղորդ չըլլայ անմիջնորդաբար այս մասին հետ եւ գրաւեալ չըլլայ պարգեւատուին ուրիշ բաներէն :

Բաժանելի համարեալ է որ եւ է իր, որ թող կուտայ բաժանումը առանց կորստեան արժողութեան, եւ որ կրնայ օգտակար ըլլայ յետ բաժանման, ինչպէս նախ քան զբաժանումն :

Յօդ. 72. — Եթէ պարգեւեալ իրն հաղորդակից է, գործով բնութեան, պարգեւատուին ուրիշ իրին հետ, թէ երբոր գրաւէ զայն պարգեւատուն եւ թէ երբոր գրաւի անկէ, մինչ իրն այն ընդունակ է բաժանման, պարգեւատուութիւնն չզօրեր, եթէ պարգեւատուն անոր բաժանումը բրած չըլլայ եւ զայն պարգեւատուին տուած չըլլայ, կամ անոր կարողութիւն տուած չըլլայ եւ անիկայ եւս բաժանումը ընելով իրը ստացած չըլլայ :

Եթէ պարգեւեալ իրն հաղորդ է պարգեւատուին ուրիշ բանին հետ՝ գործով մարդոյ, պարգեւատուութիւնն ոչինչ է, երբոր նորին առարկայն գրաւեալ իրն է , միայն թէ բաժնուած չըլլայ պարգեւատուին ուրիշ բանէն :

Պարգեւատուութիւնն վաւեր է , եթէ նոյն խի պարգեւեալ իրն գրաւէ պարգեւատուին իրը, եւ կը փոխադրէ բնատէրութիւնը տուչութեամբ, նաեւ առանց բաժանման :

Պարգեւեալ անբաժան իրը ընդունող պարգեւատուն, երբոր նոյն իրն գրաւեալ է եւ չէ բաժանեալ , չկրնար անոր վրայօք տրամադրել վաւերաբար :

Այնպիսին պատասխանատու է իւր գործով եւ դիպուածով կամ գործածութեամբ պատահած կորստեան :

Պարգեւատուն կամ ժառանգք նորին կրնան արամադրել պարգեւեալ իրի վրայօք, կամ զայն հատուցանել տալ , նաեւ երբոր իրն այն պարգեւեալ ըլլայ արգելեալ աստիճանի ազգականի մը :

Յօդ. 73. — Այն ամեն բան՝ որ չհամարիր ունենալ անհատական գոյութիւն, չկրնար առարկայ ըլլալ վաւեր պարգեւատուութեան, ինչպէս պիւրն ի ցորենի, իւղն ի չուշմայի, կարգն ի կաթի, եւլն. :

Յօդ. 74. — Բաժանելի իրի մը պարգեւատուութիւնն , թէպէտեւ դեռ եւս անբաժան մնայ, վաւեր է անոնց ամենուն համար, որոնք ի միասին ստացող են :

Նոյն իրը չկրնար մէկ անձ մը վաւերաբար պարգեւել ի նպաստ երկուց բարեկեցիկ անձանց, որպիսի որ ըլլայ անոնց կացութիւնը, առանց կանխիկ բաժանման, իւրաքանչիւր պարգեւատուին մասը որոշելու համար :

Ի նպաստ երկուց աղքատաց եղած պարգեւատուութիւն իրի, մինչ կատարուի վերոյիշեալ թէութիւններով, վաւեր է :

Յօդ. 75. — Պահանջատէրն կրնայ պարգեւել վաւերաբար իւր պահանջը իւր պարտապանին :

Պարգեւատուութիւնն այն կատարեալ է առանց ընդունելութեան պարգեւատուին :

Դարձեալ կատարեալ է թողութիւն պարտուց, միայն թէ պարտապանն զլանայ վճարել պարտքը : Սակայն եթէ պահանջն ծաղի փոփոխման մը դնէն կամ վաճառմանէ մը՝ որ կ'ըլլայ մեծ քանակութեամբ, հարկաւոր է բացայայտ ընդունելութիւն պարգեւատուին :

Յօդ. 76. — Ոչինչ է պարգեւատուութիւն պահանջի ի շնորհս այնպիսի անձին՝ որ պարտապան չէ, ի բաց առեալ զդիպուածն լքման⁽¹⁾ պահանջի, կամ տրամադրութեան՝ որ կ'ըլլայ կտակաւ, կամ կրողութեան՝ որ տուեալ ըլլայ պարգեւատուին պարտապանէն խնդրելու համար փոխանորդութեան տիպոսիւ, եւ դիպուածն իրական ընդունելութեան :

ՀԱՏԱԾ Գ. — Պարգեւատուութիւնը ընդունելու ընդունակ անձանց վրայ

Յօդ. 77. — Պարգեւատուութիւնն հաւանեալ ի ինամակալէ ի շնորհս կրտսերոյն՝ որ ենթարկեալ է իւր ինամակալութեան , կատարեալ է զօրութեամբ միակ գործոյն :

Նոյն ինքն պարգեւատուն , հայր կամ մայր կրտսերոյն , կամ ի թերութեան նոցին, որ եւ է ուրիշ անձ, որ ինամք ունի անոր, պարգեւատուի անձը կը ներկայացնէ ստացումը ստանձնելու համար :

(1) Cession de créance.

Սակայն պարգևեալ իրն պէտք է որ որոշեալ եւ բաժանեալ ըլլայ, երբոր բաժանելի է, եւ պէտք է գտնուի ի ստացման պարգևատուին, կամ աւանդապահի⁽¹⁾ կամ անօթառուի⁽²⁾ եւ ոչ թէ ի ձեռս զրաւ կամ զրաւական առնողի կամ յափշտակողի:

Չափահասի մը եղած պարգևատուութիւնն կատարեալ չէ, եթէ ընկալեալ չըլլայ ի պարգևատուէն կամ անոր փոխանորդէն, թէպէտ եւ պարգևատուն եւ պարգևառուն ի միասին ապրին հասարակութեամբ:

Յօդ. 78. — Պարգևատուութիւնն՝ եղեալ օտար անձէ ի չնորհս կրտսերոյն, կրնայ ընդունուիլ որ եւ է անձէ, որ պահպանէ զպարգևառուն:

Բանավարութիւնը ստացած կրտսեր ընդունելութիւնն վաւեր է, նաեւ ի ներկայութեան հօր:

Յօդ. 79. — Յետ կատարման ամուսնութեան, այրն կրնայ ընդունել իւր կրտսեր կնոջ եղած պարգևատուութիւնը, նաեւ ի ներկայութեան հօր:

Չկրնար նոյնը ընել վաւերաբար ամուսնութեան կատարուելէն առաջ, կամ կնոջ չափահաս ըլլալէն յետոյ:

Յօդ. 80. — Պարգևատուն կրնայ յետս կոչել պարգևատուութիւնն ըստ բողոքին կամ ըստ մասին, նաեւ երբոր հրաժարած ըլլայ այս իրաւունքէն:

Յօդ. 81. — Ի դիպուածի աճման, որ հաղորդուի պարգևեալ իրի, այնպէս որ առաւելու արժողութիւնն, այլ եւս չէ ընդունելի յետս կոչումն:

Պարգևեալ իրի չհաղորդեալ աճումն չկրնար խոչընդոտան ըլլալ յետս կոչման, թէպէտեւ նոյն աճումն յառաջ գայ կամ ոչ նոյն իրէն: Նոյնը պէտք է ըսել նկատմամբ աճման գնոյն պարգևեալ իրի:

Մինչ զազարի պատճառն արգելքի վերստին կը կենդանանայ յետս կոչման իրաւունքն:

Յօդ. 82. — Դաշնադրողներէն մէկուն մահն, յետ տուչութեան իրի կորսնցնել կուտայ յետս կոչման իրաւունքը:

Յօդ. 83. — Եւ եւս վերջնական օտարացուցումն պարգևեալ իրի, զոր ի գործ զրած ըլլայ պարգևատուն, կորսնցնել կուտայ յետս կոչման իրաւունքը:

1) Dépositaire.

2) Commoditaire.

Այդ իրաւունքն կը յարատեւէ միշտ եթէ վերջնական չըլլայ օտարացումն: Ի դիպուածի, յորում պարգևատուն վաճառած ըլլայ պարգևեալ իրի մէկ մասը, պարգևատուն կրնայ յետս կոչել պարգևատուութիւնը միւս մասին համար:

Յօդ. 84. — Պարգևատուութիւնն եղեալ յառնէ առ կինն, ամուսնութեան կատարուելէն յառաջ կամ յետոյ, աննահանջելի է, նաեւ ի դիպուածի լուծման նորին իսկ ամուսնութեան:

Կինն կրնայ պարգևել առն տուն մը սեփական կարասեօք հանդերձ: Թէպէտեւ տունն զրաւեալ ըլլայ յիրաց պատկանելոց առ կինն պարգևատու, պարգևատուութիւնն վաւեր է:

Յօդ. 85. — Աննահանջելի է պարգևատուութիւնն եղեալ ի չնորհս ազգականի միոյ կարգելոյ յարգելեալ աստիճանի, թէպէտեւ Քրէստոնեայ ըլլայ այնպիսին կամ Հրէայ, Օսմանեան հպատակ կամ ոչ, Օսմանեան նահանգաց մէջ ընակի կամ ոչ:

Պարգևատուութիւնն եղեալ ազգականի միոջ, որ չէ յարգելեալ աստիճանի, կամ անձին՝ որ չէ արգելեալ խնամութեան պատճառաւ, նահանջելի է:

Յօդ. 86. — Կորուստն պարգևեալ իրի ի ձեռս պարգևառուի, որ հանդպի նորին գործով, պատահական դիպուածով կամ գործածութեամբ, կորսնցնել կուտայ յետս կոչման իրաւունքը:

Մասնական կորստեամբ կը յարատեւէ այս իրաւունքս, նկատմամբ գոյութիւն ունեցող մասին:

Յօդ. 87. — Եթէ, յետ գործոյ պարգևատուութեան, պարգևատուն փոխարինութիւն մը ընէ պարգևատուին, եւ անիկայ ընդունի զայն, յետ որոշման եւ բաժանման, նոյն պարգևատուն չկրնար այլ եւս նահանջել ի պարգևատուութիւնէ, միայն թէ ի փոխարէն տրուած իրն չկազմէ մասն պարգևեալ առարկայից:

Եթէ փոխարինութիւնն մասնական է, պարգևատուն կրնայ յետս կոչել պարգևատուութիւնը ըստ առաւելութեան: Այսպէս կրնայ յետս կոչել կէսը, եթէ փոխարինութիւնն արժուած ըլլայ կիսով չափ պարգևատուութեան:

Յօդ. 88. — Եթէ պարգևատուէն յետս առնուի իրն ընկալեալ ի փոխարինութիւն պարգևատուութեան, ինքն եւս կրնայ յետս կոչել ամբողջ պարգևատուութիւնը, եթէ կենայ այն ի բուն իսկ տեսակի եւ չունենայ աճումն եւ ոչ իսկ ուրիշ արգելք յետս կոչման համար:

Նոյնպէս երբոր պարգեւեալ իրն յետս առնուի ի պարգեւառուէն, կրնայ անիկայ եւս յետս դարձնել տալ ի փոխարինութիւն արուած իրը, եթէ կենայ այն ի բուն իսկ տեսակի, կամ ի դիպուածի կորստեան, պահանջել ինչ նորին տեսակի, եթէ մշակելի էր այն, կամ զզին տուեալ իրի, եթէ կրնայ արժողութիւն ունենալ :

Եթէ կէսն պարգեւեալ իրի յետս առնուի պարգեւատուէն, սոյնն կրնայ յետս դարձնել տալ ի փոխարինութիւն արուած իրի կէսը :

Ի հակառակ դիպուածի, պարգեւատուն չկրնար գործածել յետս կոչման իրաւունքը, եթէ ոչ յետ հատուցման կիսոյ իրի որ ընկալեալ է ի փոխարինութիւն որ եւ դեռ եւս կը պահուի :

Յօդ. 89. — Եթէ պարգեւեալ իրն կորսուի ի ձեռս պարգեւատուին, եւ յետ դատաստանական խնդրանաց, դատապարտուի այն ի հատուցումն, չունի իրաւունք դատ բանալու ընդդէմ պարգեւատուին :

Յօդ. 90. — Հայրն չկրնար, յորում եւ է դիպուածի փոխարինութիւն ընել իւր կրտսեր եւ պարգեւատու որդւոյն ինչքէն :

Յօդ. 91. — Աղքատի մը եղած եւ անկէ ընդունուած պարգեւատուութիւնը աննահանջելի է :

Յօդ. 92. — Եղած պարգեւատուութիւն յետս կը կոչուի թէ համաձայնութեամբ դաշնադրող անձանց եւ թէ որոշողութեամբ դատաւորի :

Որ եւ է կերպիւ ըլլայ յետս կոչումն, պարգեւատուութեան գործն կ'ոչնչանայ, անկախաբար ուրիշ որ եւ է ձեւակերպութենէ :

Եթէ պարգեւատուն ձեռք բերէ պարգեւեալ իրը, առանց վճռոյ կամ հաւանութեան պարգեւառուին, պատասխանատու է կորստեան այնր, որ հանդպի իւր գործով, զիպուածով կամ գործածութեամբ :

Յետ վճռոյ պարգեւատուին եղած պաշտօնական ազգարարութիւն, կը պարտաւորէ զանիկայ պատասխանել իրի կորստեան համար, երբոր կորուստն պատահած է իւր ձեռքը :

Յօդ. 93. — Որոշ փոխարինութիւն մը ընելու պարտաւորութեամբ եղած պարգեւատուութիւն՝ որ նոյն վարկենին դաշնադրուի, կատարեալ չէ, եթէ ոչ փոխադարձ տուչութեամբ :

Նոյնպէս գործն ոչինչ է, եթէ փոխարինութիւնը կազմող առարկայք բաժանեալ չըլլան, թէպէտեւ բաժանելի ըլլան :

Փոխադարձ տուչութիւն կը փոխադրէ գյատուկ ընտանրութիւն իւրաքանչիւր ումեք ի դաշնադրողաց :

Այս դիպուածիս մէջ գործն՝ փոփոխման կը նմանի, եւ վաճառման նկատմամբ եղած արամադրութեանց կ'ենթարկուի՝ Ուստի լուծանելի է այն՝ ծածուկ կամ պարտաւորիչ թերութեանց համար, եւ առարկայքն հատուցման ենթակայ են :

Եթէ մին կամ միւսն ի պարգեւեալ իրաց չյանձնուի մէկ կամ միւս կողմանէ, կամ եթէ միմիայն կողման յանձնուի, կը մնայ միշտ յետս կոչման իրաւունքն ի շնորհս երկուց կողմանց եւս :

Յօդ. 94. — Բարերարութեան պարգեւատուութիւն նման է հասարակ պարգեւատուութեան : Բնատէրութիւն չփոխադրուիլ եթէ ոչ տուչութեամբ :

Այդպիսի պարգեւատուութիւն, նաեւ ի շնորհս հարուստ անձին եղած ըլլալով, աննահանջելի է :

Յօդ. 95. — Կտակի գործ մըն է, որով կտակագիրն⁽¹⁾ կ'օտարացնէ իւր սեփական իրը ճրիարար այն ժամանակի համար, յորում կը դադարի ապրիլ :

Յօդ. 96. — Կտակ ընելու համար պէտք է ըլլալ ազատ չափահաս, ողջամիտ, եւ վայելի իւր ազատ կամքը :

Դարձեալ պէտք է որ կտակառուն իրօք կենդանի ըլլայ, կամ գէթ յղացեալ ըլլայ, եւ հրիտակ եղած իրն ընդունակ ըլլայ փոխադրուելու յետ մահուան կտակագրի :

Ոչինչ է կտակն եղեալ ի խելագարէ եւ ի կրտսերոյ, թէպէտեւ երիտասարդ կամ յիշխանութենէ ազատեալ ըլլայ այն, եւ թէպէտեւ կտակն յօրինեալ ըլլայ միամտաբար եւ պարզապէս կամ ընդ թէութեամբ, որ ի կախ մնայ մինչեւ ցճափահասութիւն :

Տրամադրութիւնք վերջին կամաց կրտսերոյն՝ նկատմամբ յուղարկաւորութեան եւ թաղման, վաւեր են :

Յօդ. 97. — Տրամադրութիւնք կտակի՝ զոր ընէ արգելեալ անձն առատաձեռնութեամբ՝ ի շնորհս աղքատաց կամ բարեպաշտական տեղեաց կամ բարերարութեանց, վաւեր են :

Յօդ. 98. — Հնար է տրամադրել կտակաւ թէ՛ շարժական եւ թէ՛ անշարժ ընչից վրայօք, կամ ասոնց պտղոց վայելման վրայօք, որոշ ժամանակի համար կամ ցմշտնջնաւորս :

(1) Testateur.

Յօդ. 99. — Որ եւ է անձ, որ իւր ինչքը լափող պարտուք ծանրաբեռնեալ է՝ եւ անժառանգ է, կրնայ կտակաւ տրամադրել իւր ընչից բոլորին կամ մէկ մասին վրայօք ի շնորհս որոյ եւ է անձի :

Կտակն գործադրական է անկախաբար ի հաւանութենէ հասարակաց գանձին :

Յօդ. 100. — Կտակ անձին՝ որ իւր բոլոր ինչքը լափող պարտուք ծանրաբեռնեալ է, անվաւեր է, եթէ պահանջատեարք չաղատեն կտակադիրը կամ չհաւանին հրիտակաց :

Յօդ. 101. — Տրամադրութիւն եղեալ կտակաւ ի շնորհս ժառանգի միոյ անվաւեր է, եթէ չհաստատուի, յետ մահուան կտակադրի, ի ժառանգաց՝ որ ընդունակ ըլլան տրամադրել իրենց իրաւանց նկատմամբ :

Ժառանգի յատկութիւնն կը սահմանուի ի վայրկենի մահուան կտակադրի, եւ ոչ թէ ի կտակէ :

Հրիտակառու ժառանգին հաստատութիւնն աննահանջելի է : Հարկադրեալ է անիկայ լքանել հրիտակը, եթէ զլացուի :

Հրիտակառու չեղող ժառանգներէն մէկուն հաստատութիւնն՝ իւր արդիւնքը յառաջ կը բերէ նկատմամբ անոնց միայն, որ նոյն հաստատութիւնը արտայայտեցին, համեմատաբար իրենց ժառանգական մասանց :

Յօդ. 102. — Հնար է տրամադրել սեփնական ընչից երրորդ մասը ի շնորհս անձին՝ որ օտար է ընտանեաց, եթէ արգելք սեղի չունենայ : Յայսմ դիպուածի վաւերականութիւն տրամադրութեան՝ ընտանեաց հաւանութեան չենթարկուի :

Տրամադրութիւն կտակի՝ ըստ որում աւելի է ժառանգական ընչից երրորդ մասէն, անվաւեր է, եւ կրնայ վաւեր ըլլալ զօրութեամբ հաւանութեան՝ զոր տան, յետ մահուան կտակադրի, ժառանգք ընդունակը ի տրամադրել իրենց իրաւունքը :

Հաւանութիւն տուեալ ի ժառանգաց, ի կենդանութեան կտակադրի, ոչինչ է :

Յօդ. 103. — Իւր կնկանէն ուրիշ ժառանգ չունեցող անձն կրնայ կտակել ի շնորհս նորին : Եթէ ուրիշ ժառանգ ունենայ տրամադրութիւնն անոր հաւանութեան ենթարկեալ է :

Յօդ. 104. — Ոչինչ է որ եւ է տրամադրութիւն եղեալ ի շնորհս ուղղակի հեղինակի սպանութեան կտակադրի, որ հանդիպի կտակէն առաջ կամ յետոյ, խորհրդածութեամբ կամ ըստ պատահման, միայն թէ ժառանգք չկենդանացնեն նոյն կտակը

իրենց հաւանութեամբ, կամ հեղինակն այն՝ կրտսեր կամ խելագար կամ կտակադրի միակ ժառանգ չըլլայ :

Անուղղակի հեղինակ մահուան կտակադրի՝ ի շնորհս իւր կտակաւ եղած տրամադրութեան բարիքը չկորսնցնել :

Յօդ. 105. — Հնար է տրամադրել ի շնորհս յղացեալ անձին, միայն թէ կենդանի եւ վեցամսեայ ծնանի, եթէ յղացող կնկան այրն կենդանի է, կամ երկու տարի առաջ, յօրէ մահուան առն, կամ նախ քան զսոսանալան, մայրն բաժանեալ է առն մահուան համար, կամ կտտարեալ կամ անկատար սպանարդանի մը համար՝ որ սեղի ունենայ կտակին ժամանակ :

Եթէ մայրն կենդանի երկուորեակ ծնանի, կէս ու կէս կը լաժնուի հրիտակն իրենց մէջ :

Եթէ երկուորեակներէն մէկն մեռնի յետ ծննդեան, նորին բաժինն կը բաժնուի իւր ժառանգաց մէջ տիտղոսիւ ժառանգութեան : Եթէ մին ի նոցանէ մեռնի ծննդենէն առաջ, բոլոր հրիտակն կենդանի մնացողին կը պատկանի :

Յօդ. 106. — Հնար է տրամադրել ի շնորհս մզկթաց, բարեգործական հաստատութեանց (թէքէ), հիւրանոցաց եւ զըպրոցաց :

Հրիտակն կը գործածուի յիշեալ հաստատութեանց շինութեան եւ անոնցմէ հողացեալ աղքատաց պիտոյից եւ պահպանութեան եւ ուրիշ ծախուց համար ըստ կիրառութեան եւ նշանակութեան կտակադրին :

Հնար է նմանապէս տրամադրել ընդհանուր տիտղոսիւ բարեգործութեան :

Այն ժամանակ հրիտակն կը գործածուի բարեգործութեանց կը բովանդակին յայսմ կտրդի շինութիւն կամրջաց եւ պառուարաց եւ մզկթաց, պահեստ կարօտ ուսանողաց իրաւադիտութեան եւ ուրիշ ամենայն գործք հասարակաց օգտի, որ առանձնականի մը տէրութեան չեն կրնար ենթարկուիլ :

Յօդ. 107. — Տարբերութիւն կրօնի կամ ազգայնութեան խոչընդոտն չըլլար կտակի տրամադրութեան վաւերականութեան :

Այսպէս մահմէտականն կրնայ տրամադրել ի շնորհս չմահմէտականի, որ հպատակ ըլլայ մահմէտական իշխանութեան, կամ ի շնորհս օտարականի որ բնակի մահմէտական նահանգաց մէջ :

Նմանապէս վաւեր է հրիտակն եղեալ ոչ մահմէտականէ :

որ հպատակ է մահմէտական իշխանութեան, կամ հրիտակն եղեալ յօտարականէ՝ որ բնակի մահմէտական նահանգաց մէջ ի շնորհս մահմէտականի կամ չմահմէտականի, որ հպատակ է մահմէտական իշխանութեան, թէպէտեւ պատկանի այն կտակագրին ազգայնութենէն տարբեր ազգայնութեան :

Մահմէտական նահանգաց մէջ բնակող օտարականն, եթէ այս նահանգաց մէջ ժառանգ չունենայ, կրնայ տրամադրել կտակաւ իւր ընչից բոլորը. եթէ միայն մէկ մասը տրամադրէ, մնացածը պէտք է յանձնել ժառանգաց նորին :

Չմահմէտականն, որ հպատակ է մահմէտական իշխանութեան, կրնայ տրամադրել վաւերաբար իւր ժառանգութեան երրորդ մասը ի շնորհս միոյ՝ որ չէ ժառանգ իւր :

Եթէ տրամադրութիւնն եղած ըլլայ ի շնորհս ժառանգի միոյ, այդ չգորեր առանց հաւանութեան միւս ժառանգաց :

Յօդ. 108. — Հրիտակն չըստացուիր եթէ ոչ կերպական կամ լեւեբայն ընդունելութեամբ, յետ մահուան կտակագրի : Ընդունելութիւնն ի կենդանութեան նորին ոչինչ է :

Բնատէրութիւնն կը ստացուի հրիտակառուէն միակ գործով ընդունելութեան հրիտակի յետ մահուան կտակագրի, անկախաբար յորմէ եւ է ձեռնարկութենէ ստացման :

Եթէ հրիտակառուն ոչ ընդունի եւ ոչ մերժէ հրիտակը, հրիտակեալ իրն ի կախ կը մնայ, եւ չպատկանիր ոչ ժառանգաց, ոչ հրիտակառուի, մինչեւ որ արտայայտէ ինքն ընդունելութիւնը կամ մերժումը, կամ մեռնի :

Եթէ հրիտակառուն մեռնի յետ կտակագրի առանց արտայայտելու ինչ, հրիտակն ժառանգաց կը պատկանի :

Յօդ. 109. — Կտակագիրն կրնայ յետս կոչել հրիտակը բացայայտակի կամ որով եւ է գործով, որ փոփոխութիւն ինչ նշանակէ անուան կտակեալ իրի եւ չափաւորէ անոր գոյացական կերպարանը կամ գործածութիւնը՝ առ որ սահմանեալ է, կամ գործէ ինչ՝ որով առաւելութիւն ստանայ հրիտակն, առանց որոյ կտակեալ իրն չկարենայ այլ եւս յանձնուիլ. կամ ընէ տրամադրութիւն ինչ, որով հրիտակն այն այլ եւս իւր տէրութեան չվերաբերի, եւ կամ թէ միացնէ զայն յաւելմամբ առ այլ ինչ, յորմէ չկարենայ այլ եւս զանազանիլ, կամ գծուարութեամբ կարենայ զանազանիլ :

Յօդ. 110. — Կտակեալ տրամադրութեան մը ուրացութիւնը՝ հրիտակի յետս կոչումն չէ, ինչպէս որ սպիտակացումն կամ կործանումն կտակեալ տան մը :

Յօդ. 111. — Կորուստ կտակեալ իրի ի ձեռս կտակագրի, կամ միոյ ի ժառանգաց առանց յանցանաց նորին, զիրենք պատասխանատու չընեն :

Կորուստն եղեալ գործածութեամբ կտակագրի կը հաւասարի յետս կոչման :

Ընդհակառակն ժառանգք պատասխանատու են իրենց գործածութեամբ եղած կորստեան համար, ընդունելութենէն առաջ կամ յետոյ :

Յօդ. 112. — Մահմէտական կամ չմահմէտական կտակագիրն, որ հպատակ է մահմէտական իշխանութեան եւ ժառանգունի, չկրնար կտակաւ տրամադրել վաւերաբար, եթէ ոչ իւր ընչից երրորդ մասը :

Եթէ այդ երրորդ մասէն աւելի տրամադրութիւն մը ընէ, որ չհաստատուի ի ժառանգաց, կտակառուն չունի իրաւունք եթէ ոչ կտակագրի ընչից ամբողջութեան երրորդ մասին, եւ այդ՝ եթէ կտակագիրն կտակ ըրած ըլլայ առողջ եղած ժամանակ :

Յօդ. 113. — Եթէ կտակագիրն երկու զանազան անձանց կրկին հաւասար մասն հրիտակ ըրած ըլլայ՝ որոնք ի միասին առեալ (իւր ընչից) երրորդ մասէն աւելի ըլլան եւ եթէ ժառանգք չհաստատեն այդ կրկին տրամադրութիւնը երկու կտակառուք կը բաժնեն իրենց մէջ ժառանգութեան երրորդ մասը հաւասարապէս :

Եթէ երկու անհաւասար հրիտակներէն մէկն աւելի ըլլայ երրորդէն, այս երրորդս պիտի բաժնուի երկու կտակառուաց մէջ, ամէն մէկուն կիսով չափ : Սակայն կտակառուն, որոյ հրիտակն աւելի է երրորդէն, նպաստեալ է Մօհապակի զիպուածոյ մէջ (չնորս պատճառեալ յանձնական շահուց կամ ակնածութեանց), նոյնպէս նպաստեալ է այնպիսին յայնմ՝ յորում հրիտակի առարկայն զրամի որոշեալ գումար մըն է առանց կտտորակի Սյօ երկու զիպուածոյ մէջ երրորդ մասն ժառանգութեան կը բաժնուի կտակառուաց մէջ ըստ համեմատութեան տրամադրութեան, որ եղած է ի շնորհս անոնց :

Նոյնը պէտք է ըսել, եթէ երկու հրիտակք անհաւասար ըլլան ի քանակութեան առանց անցնելու կտակագրի ընչից երրորդ մասը :

Յօդ. 114. — Եթէ կտակագիրն անորոշ մասն ինչ հրիտակ ըրած ըլլայ, որ (աւելի կամ նուազ) տարբեր ընծայէ (բաժա-

նուսը), զոր օրինակ մէկ սահմ, մէկ ճիւղ, կամ նասիպ, ժա-
ւանդաց կը պատկանի տալ կտակառուաց այնչափ բաժին՝ որ-
չափ իրենց կը հաճի: Եթէ յայտ զի պուռածի կտակագիրն ժա-
ւանդ չունենայ, կտակառուն իրաւունք ունի կիսոյ մասին
ժառանգութեան եւ միւս կէս մասն հասարակաց զանձին կը
վերաբերի:

Յօդ. 115.— Եթէ կտակագիրն իւր ընչից երրորդ մասը
երկու որոշ եւ ընդունակ անձանց թողած ըլլայ եւ եթէ կտա-
կին յօրինած վարկենին կտակառուներէն մէկն մեռած կամ
բացակայ ծանուցուած է, երրորդ հրիտակն կը պատկանի բա-
ցառաբար կենդանի կամ ներկայ եղող կտակառուին:

Եթէ երկու կտակառուներէն մէկուն մահն հանդիպի նախ
քան զմահ կտակագրի կամ նախ քան զանկումն կտակագրի
կորստեամբ էական վիճակի, այնպէս որ այդ պատահի յետ
վաւերականութեան հրիտակի, այսպիսի կտակառուի մասն կը
խախտի, եւ երրորդ հրիտակառուն իրաւունք կ'ունենայ միայն
կիսոյ երրորդ մասին ժառանգութեան:

Եթէ կտակագիրն հրիտակ ընէ իւր ընչից երրորդ մասը
ընդ մէջ երկուց անձանց յիւրմէ անուանելոց, եւ մին ի նոցանէ
մեռած ըլլայ կտակ յօրինած վարկենին, կենդանի մնացած անձն
միայն վեցերորդ մասին իրաւունք կ'ունենայ:

Երբոր մին ի կտակառուաց մեռնի յետ մահուան կտակա-
գրի, եւ նախ քան զհրատարակութիւն, հրիտակի մէջ՝ անոր
ունեցած մասն իւր ժառանգաց կը փոխանցի:

Յօդ. 116.— Եթէ կտակագիրն հրիտակ ընէ ստոյգ մարմին
մը կամ մասնաւոր տեսակ մը՝ որ էակոնապէս բաժանելի ըլ-
լայ, զոր օրինակ իւր զրամոց կամ հօտին կամ նոյն որպիսու-
թեամբ ունեցած զգեստուց երրորդ մասը, եւ կտակեալ իրի
երկու երրորդ մասն կորսուի, կտակառուն իրաւունք ունի գո-
յութիւն ունեցող բոլոր երրորդ մասին, միայն թէ այդ՝ կտա-
կագրին ընչից երրորդ մասէն աւելի չըլլայ:

Եթէ կտակագիրն հրիտակ ընէ ո եւ է ինչ էակոնապէս ան-
բաժանելի, ինչպէս երրորդ մասն անամնոց կամ տարբեր որ-
պիսութեամբ զգեստուց, եւ երկու երրորդ մասունք հրիտակի
կորսուին, կտակառուն իրաւունք ունի միայն երրորդ մասին
երրորդի՝ որ չէ կորսուած:

Յօդ. 117.— Եթէ կտակագիրն հրիտակ ընէ որոշ դումար
մը հատեալ զրամոյ, եւ ժառանգութեան պահանջ մը ունենայ

եւ միանգամայն զրամ տեսակաւոր նորին ընութեամբ, հրիտակն
կը վճարուի երրորդ մասամբ զրամական տեսակի, եթէ այդ
երրորդ մասն հաւասար կամ աւելի ըլլայ հրիտակի գումարէն:
Եթէ հրիտակն աւելի ըլլայ զրամի երրորդ մասէն, կտակառուն
պիտի առնու այդ երրորդ մասը, եւ մնացածն պիտի հատուց-
ուի իրեն՝ յընդունելութենէ պահանջի, ըստ չափու վճարմանց,
այս է երրորդ մասն իւրաքանչիւր վճարման մինչև ցամաղջ
հատուցումն հրիտակի:

ՀԱՏԱԾ Գ.— Պաղոց վայելման համար եղած

հրիտակի վրայ

Յօդ. 118.— Եթէ կտակագիրն հրիտակ ընէ բնակութեան
իրաւունքը կամ իւր տան մուտքը, թէ ցմշտնջենաւորս եւ թէ՛
առանց ժամանակ սահմանելու, կտակառուն իրաւունք ունի
բնակութեան կամ տան մուտքին ի կենդանութեան իւրում:

Ի մահուան նորին՝ կալուածն կ'ենթարկուի լիուրի տէ-
րութեան ժառանգաց կտակագրի:

Եթէ հրիտակն եղած ըլլայ սահմանեալ ժամանակի համար,
կտակառուն կը վայելէ մինչև ցվերջ այդ ժամանակի:

Եթէ կտակագիրն հրիտակ ըրած է զվայելումն պտղոց ա-
նորոյ թուով ամաց համար, վայելումն հրիտակի առ առաւելն
երեք տարի կը տեւէ:

Յօդ. 119.— Եթէ անշարժ կալուածն՝ որոյ բնակութեան
իրաւունքը կամ մուտքը՝ կտակագիրն հրիտակ ըրած է, նորին
ընչից երրորդ մասէն աւելի չէ, պիտի յանձնուի հրիտակ-
առուին, որպէս զի վայելէ զայն ըստ թէութեանց հրիտակի:

Եթէ երրորդ մասէն աւելի եւ բաժանելի ըլլայ, եւ կտա-
կագրին ուրիշ ինչք չունենայ, անշարժ ստացուածն այն պիտի
բաժնուի յերիս հաւասար մասունս, եթէ բնակութեան իրա-
ւանց համար է խնդիրն. կամ նմանապէս պիտի բաժնուին
մուտքն՝ եթէ հրիտակն ըլլայ նկատմամբ մտից: Հրիտակառուն
իրաւունք պիտի ունենայ մէկ երրորդի, եւ ժառանգը պիտի
առնուն երկու երրորդ մասունքը, առանց կարենալու օտարա-
ցընել զանոնք, որչափ ժամանակ տեւէ իրաւունք կտակառուին:

Եթէ ժառանգութիւնն ուրիշ ինչք ունենայ, անշարժ ստացուածն պիտի բաժնուի ըստ չափու երրորդ մասին բովանդակ ժառանգութեան :

Յօդ. 120.— Բնակութեան իրաւունք ունեցող կտակառուն չկրնար վարձել անշարժ ստացուածը :

Մտից իրաւունք ունեցող կտակառուն չկրնար բնակիլ անշարժ ստացուածին մէջ, որոյ մուտքն միայն իրեն հրիտակ թողուած է :

Յօդ. 121.— Եթէ երկրի մը արդիւնքն հրիտակ եղած ըլլայ, կտակառուն իրաւունք ունի հնձոց՝ որ երկրին վրայ կը գտնուին կտակազրի մահուան վարկենին, եւ հնձոց՝ զորս նոյն երկիրն պիտի պտղաբերէ յետոյ, մինչ հրիտակն յորինուած ըլլայ ցմշտնջենաւորս կամ առանց ժամանակ սահմանելու :

Յօդ. 122.— Եթէ կտակազրին հրիտակ ընէ իւր երկրին կամ իւր պարտիզին պտուղները առանց ժամանակ սահմանելու, կտակառուն իրաւունք ունի միայն պտուղներուն՝ որ կախուած են կտակազրի մահուան ժամանակ, եւ եւս անոնց՝ որ յետոյ պիտի բուսնին : Նոյնը պէտք է ըսել, եթէ հրիտակի առարկայ եղած անշարժ ստացուածն չպտղաբերէ կտակազրին մահուան վարկենին :

Յօդ. 123.— Հնար է կտակել զվայելումն պտղոց մէկ անձի մը, եւ մերկ կալուածը միւսոյն :

Տասանորդն կամ կալուածական տուրքն եւ ոռոգման ծախքն եւ ուրիշ հարկաւոր ծախք ի բարոցումն երկրի՝ պըտուղը վայելող անձին կը պատկանին, եթէ երկիրն հնձոց ենթակայ պտուղներ ունենայ : Ի հակառակ դիպուածի, այս ծախքերս եւ հարկերն կը պատկանին մերկ կալուածոց հրիտակառուին :

ՀԱՏԱԾ Դ.— Հիւանդէ մը եղած տրամադրութեանց գործոց վրայ

Յօդ. 124.— Որ եւ է լոկ եւ պարզ տրամադրութիւն՝ որ եղած է ձրի տխողութիւն լիուրի առողջութիւն վայելող անձէ, գործադրական է տրամադրողին բոլոր ընչից նկատմամբ :

Յօդ. 125.— Մահուան ենթարկեալ տրամադրութիւնք գոր-

ծաղրական են տրամադրողին ընչից երրորդ մասին նկատմամբ, թէպէտեւ նոյն տրամադրութեանց հաւանած ըլլայ ինքն իւր լիուրի առողջութիւնը վայելած վարկենին :

Յօդ. 126.— Հիւանդէ մը ձրի տխողութիւն եղած տրամադրութիւնք, թէ ըստ ձեւոց վագրօթի կամ պարզաւատութեան ընդ մէջ կենդանեաց կամ ըստ ձեւոյ ապահովութեան կամ Մոնապայի (օգուտ պատճառեալ յանձնական շահուց կամ ակնածութեանց) եղած ըլլան, թէ առթիւ վարձու՝ որ դաշնադրեալ ըլլայ հիւանդէն, կամ առթիւ իրմէ սահմանեալ օժտի կամ վաճառման կամ գնման կամ որոյ եւ է ուրիշ քաղաքական գործոյ տեղի ունենան, կը նմանին կտակեալ տրամադրութեանց եւ գործադրելի են նկատմամբ երրորդ մասին ժառանգութեան :

Հիւանդութեան միջոցին եղած տրամադրութիւնք, մինչ տրամադրողն անկէ ապաքինեալ է, եղեալ կը համարին իբր ի վարկենի կատարեալ առողջութեան :

Յօդ. 127.— Ջղային արտիւ կարկամեալ եւ անդամալուծութեամբ եւ վերնտուրութեամբ արտացեալ անձէ եղած ամէն պարզաւատութիւն գործադրելի է անոր ընչից լրութեան վրայ, եթէ տրամադրողին հիւանդութիւնն կամ ախտն մէկ տարի տեւելով կեանքը վաանգի մէջ չէ դրած :

Ի հակառակ դիպուածի, տրամադրութիւնն գործադրելի է ժառանգութեան երրորդ մասին վրայ :

Յօդ. 128.— Վաւեր է յայտարարութիւնն եղեալ ի հիւանդէ նկատմամբ ծանուցման պարտուց երրորդ անձին՝ որ ժառանգ չէ, եւ նոյն յայտարարութիւն կը գործադրուի բոլոր ընչից նըկատմամբ, թէպէտեւ պարտքն նոյն ինչքը բոլորովին լափէ :

Նոյնը պէտք է ըսել ժառանգ չեղող երրորդ անձին ստոյգ մարմնոյ վրայ ունեցած իրաւանց ճանչցուելուն համար հիւանդէն եղած յայտարարութեան նկատմամբ, միայն թէ նոյն իրին հիւանդութեան ժամանակ հիւանդին պատկանիլը չապացուցուի :

Յօդ. — 129.— Երբոր միւս ժառանգներէն չհաստատուի, ոչինչ է յայտարարութիւնն եղեալ ի հիւանդէն ի ճանաչումն պարտուց իրիք, կամ բնատէրութիւն ստոյգ մարմնոյ իրիք ի շնորհս ժառանգի միոյ կամ ի ճանաչումն վճարման՝ զոր ըրած ըլլայ նոյն ժառանգն կամ երաշխաւորած ըլլայ հիւանդին պարտքը :

Սակայն վաւեր է յայտարարութիւնն եղեալ ի հիւանդէ

ըստ որում գործածած ըլլայ ժառանգէն իրեն յանձնուած աւանդ մը , կամ ընդունած ըլլայ ժառանգէն իրեն յանձնուած աւանդի մը հատուցումը , կամ ընդունած ըլլայ զվճարումն պահանջի՝ զոր ժառանգն առած է հրամանաւ կտակագրի :

Յօդ. 130.— Ժառանգին յատկութիւնն կը սահմանուի ի վայրկեանի յայտարարութեան, միայն թէ յատկութիւնն այն պատկանի նմին յայդմ վայրկեանի՝ ազգակցութեամբ կամ ուրիշ գոյութիւն ունեցող պատճառաւ, եւ ժառանգելու արգելք մը չըլլայ յայտարարողին մահուան վայրկեանին :

Այսպէս վաւեր է յայտարարութիւնն եղեալ ի ճանաչումն պարտուց ի չնորհս կնոջ՝ որ օտար է յայտարարողին, նաեւ երբոր ժառանգ ըլլայ յետոյ՝ ամուսնանալով ընդ յայտարարողին :

Սակայն ոչինչ է յայտարարութիւնն եղեալ ի չնորհս որդւոյ մը , որ զրկեալ ըլլայ ի ժառանգութենէ ի վայրկեանի յայտարարութեան՝ տարբերութեամբ կրօնի, եթէ դառնայ ի մահմէտականութիւն՝ յայտարարողին մահուանէն առաջ :

Նմանապէս ոչինչ է յայտարարութիւնն եղեալ ի չնորհս եղբոր, որ զրկեալ է ի ժառանգութենէ՝ ի վայրկեանի յայտարարութեան, կրօնի տարբերութեան կամ որդւոյ մը համընթացութեան համար, որ ի վայրկեանի մահուան յայտարարողի ժառանգ կ'ըլլայ դադարմամբ պատճառի զրկողութեան : Բայց յայտարարութիւնն եղեալ ի չնորհս եղբոր, եթէ յայտարարողին որդի մը ծնանի եւ կենդանի մնայ մինչև ցմահ նորին եւ կը մերժէ եղբայրը ի ժառանգութենէ :

Յօդ. 131.— Եթէ հիւանդն ճանչցած ըլլայ պարտք մը՝ կամ հրիտակ մը սահմանած ըլլայ ի չնորհս արձակեալ կնոջ իւրոյ, մինչ նոյն կինն խնդրէ զինքը ի միջոցի վերջին հիւանդութեան տրամադրողի, անահանջելի կերպիւ, թէ կատարեալ եւ թէ անկատար ըլլայ նոյն կերպն, կինն՝ ծանուցեալ պարտքէն՝ կարգեալ հրիտակէն եւ իրէն՝ իրրեւ արձակեալ կնոջ ժառանգական մասէն, նուազ քանակութիւն ունի :

Եթէ արձակումն կնոջ խնդրանք չըլլայ, ինքն իրաւունք ունի իւր բովանդակ ժառանգական մասին, որքան աւելի ըլլայ այն, եթէ հիւանդն մեռնի ի միջոցի առանձնութեան նորին :

Յօդ. 132.— Ոչինչ է ներումն պարտուց՝ զոր ընէ հիւանդն իւր ժառանգ չեղող պարտատեան, եթէ նոյն հիւանդն ծանրաբեռնեալ ըլլայ իւր հարստութիւնը լափող պարտուք : Բացարձակապէս ոչինչ է ներումն՝ զոր ընէ հիւանդն ժառանգ եւ

զող պարտատեան, թէ՛ երբոր հիւանդն ծանրաբեռնեալ ըլլա՞յ պարտուք թէ՛ չըլլայ, եւ թէ՛ երբոր ներեալ պարտքն՝ զոր ունի ժառանգն՝ ըլլայ իբրեւ զլիւար պարտատէր կամ իբրեւ երաշխաւոր :

Յօդ. 133.— Պարտքն նախագաս է հրիտակի եւ հրիտակն նախագաս է իրաւանց ժառանգութեան :

Յայտարարութեամբ ծանուցեալ պարտքն ի միջոցի կատարեալ քաջողութեան, կամ ասպացումմբ հաստատեալ պարտքն, նախագաս է պարտուց՝ որ ճանչցուած ըլլայ ի միջոցի վերջին հիւանդութեան, թէպէտեւ այդ աւանդ մը ըլլայ. նոյն պարտքն նմանապէս նախագաս է ամէն պարտաւորութեանց որք դաշնադրեալ ըլլան ի միջոցի վերջին հիւանդութեան ծանուցեալ պատճառի մը համար, զոր օրինակ հրապարակական ամուսնութիւն մը կարգմամբ օժտի, որ հաւասար ըլլայ սովորականին, կամ ծանօթ վաճառումն ինչ ըստ սովորական գնոյ, կամ կորուստ օտար իրի՝ որ հանդիպի ի ձեռս հիւանդի :

Յօդ. 134.— Հիւանդն չկրնար վճարել վաւերաբար իւր պարտուց մէկ մասը, որ ի նմին վիճակի են, նաեւ երբոր օժտական ըլլան կամ անցեալ վարձուց համար պահանջուին :

Հիւանդութենէ առաջ պահանջատէր եղող ամէն անձինք կը համընթանան օժտի պատճառաւ պահանջատէր եղող կնոջ, եւ վարձու պահանջատեան :

Բացառութիւն կ'ըլլայ սկզբանս, երբոր խնդիրն է՝ ի միջոցի հիւանդութեան եղած փոխառութիւն մը կամ հիւանդի համար գնեալ իրի սովորական գինը վճարելու նկատմամբ, միայն թէ փոխառութիւնն այն եւ գնումն ասպացուցուի դատաստանական եղանակաւ :

Եթէ գնեալ իրի գինն չէ վճարեալ նախ քան դմահ գնողին, վաճառողն կը համընթանայ ամէն պահանջատեարց հետ, միայն թէ ինքն չըլլայ գեռ եւս ի ստացման վաճառեալ իրի, յորում զիպուածի ինքն արածնացեալ է :

Բացակայ կը համարի որ եւ է անձ որ չէ ներկայ, եւ որոյ գոյութիւնն կամ մահն անստոյգ է :

Յօդ. 135.— Եթէ բացակայն գործակալ մը թողած ըլլայ իւր ինչքը մասակարարելու եւ պահպանելու համար, կարգողին բացակայութեան պատճառաւ գործակալութիւնն յետս չը կոչուիր :

Կարծեցեալ ժառանգը բացակային չեն կրնար ինչքը առնուլ

գործակալին ձեռքէն կամ հասարակաց դանձէն, թէպէտեւ բացակայն ժառանգ չունենայ:

Գործակալն չկրնար նորոգել բացակային անշարժ ստացուածքը, երբ նորոգութեան կարօտին, առանց հրամանի դատարրին:

Յօդ. 136. — Եթէ բացակայն գործակալ ընտրած չըլլայ, դատարուն դատաստանական գործակալ մը կ'անուանէ՝ բացակային շարժական եւ անշարժ ինչքը ժողվելու, պահպանելու, մատակարարելու, մուտքը առնելու, եւ բացակային պահանջները պարտասէրներէն ձեռք բերելու համար:

Յօդ. 137. — Դատարուն կրնայ վաճառել բացակային շարժական եւ անշարժ ինչքը՝ որ մերձաւորապէս վատթարանալու ենթակայ են:

Անիկայ կը պարտաւորի պահել սնունց գինը բացակային հատուցանելու համար, երբոր վերագառնայ, կամ ժառանգաց տալու համար յետ մահուան նորին, որ ապացուցուի դատաստանաւ:

Դատարուն չկրնար վաճառել բացակային ո՛ր եւ է ստացուածքը, որոյ վատթարանալն հնարաւոր չէ, եւ ոչ իսկ բացակային ընտանեաց ապրուստի պիտոյքը հողալու համար կամ սյաղղ:

Յօդ. 138. — Դատաստանական գործակալն կրնայ, բացակային կնոջ եւ նախահարց եւ սերնդոց ապրուստի ծախքը հոգալ, մինչ իրաւունք ունենան թոշակի: Այս ծախքերս պիտի ընէ բացակային թողած զրամով, վաճառեալ ընչից գնով կամ ընկալեալ պահանջանաց գումարով, կամ ծանուցեալ աւանդներով:

Յօդ. 139. — Բացակայն կենդանի կը համարի նկատմամբ իրեն վնասակար եղած գործոց եւ այնպիսեաց՝ որ ենթակայ են իւր մահուան ապացուցման:

Այսպէս կրնն չկրնար երկրորդ ամուսնութեան անցնիլ, ժառանգք չեն կրնար բաժնել իւր ժառանգութիւնը, իւր վարձքն չեն լուծուիր:

Դատարուն չկրնար լուծեալ հրատարակել ամուսնութիւնը առանց ապացուցման կենդանութեան կամ մահուան բացակային, նաեւ յետ անցանկելոյ չորից ամաց ի բացակայութենէ:

Յօդ. 140. — Փոխադարձաբար բացակայն մեռեալ կամ անստոյգ վիճակի մէջ կը համարի նկատմամբ այն գործոց՝ որք

իրեն նպատաւոր եւ ուրիշներուն վնասակար են եւ որոնք իւր կենդանութեան ապացուցման կ'ենթարկուին:

Այսպէս չկրնար ընդունել ժառանգութիւն մը կամ հրիտակ մը՝ որ սահմանեալ ըլլայ ի շնորհս իւր: Իւր բաժինն ժառանգութեան կամ հրիտակն կը պահուի մինչեւ ցապացուցումն կենդանութեան կամ մահուան նորին՝ ծանուցեալ վճռով:

Յօդ. 141. — Բացակայն մեռեալ կը հրատարակուի, եթէ իւր քաղաքին մէջ ապրող իւր ամէն ժամանակակիցները մեռած ըլլան:

Եթէ անհարին ըլլայ ճանչնալ բացակային ժամանակակիցները, դատարուն կը վճռէ նորին մահը իննսուռն տարին լրացուցած ժամանակ:

Յօդ. 142. — Յետ վճուելոյ ի դատարոյ՝ մահ բացակային, կը բաժնուի անոր ինչքը ընդ մէջ ժառանգաց՝ որ կը գանուին ի վարչկենի ծանուցման վճռոյ մահուան:

Բացակային համար պահուած բաժինն ժառանգութեան կը հատուցուի իրաւատեարց, իսկ հրիտակն սահմանեալ եւ եզեալ ի պահեստի ի շնորհս բացակայի, կը հատուցուի ժառանգաց կտակազրի:

Բացակային կնոջ այրիութեան առանձնութիւնն կը սկսի մահուան ծանուցեալ վճռոյ թուականէն, եւ կրնն կրնայ յետ լրացնելոյ իւր առանձնութիւնը, երկրորդ ամուսնութեան անցնիլ:

Յօդ. 143. — Եթէ յայտնուի բացակային կենդանութիւնն, կամ եթէ վերագառնայ անիկայ որ եւ է ժամանակ, իրաւունք ունի իւր ժառանգութեան մասին այն ժամանակէն առաջ մեռած ազգականաց ընչից վրայ:

Եթէ կենդանի վերագառնայ յետ ծանուցեալ վճռոյ մահուան, ժառանգաց ստացած եւ ի տեսակի մնացած իւր ինչքը յետս կ'առնու: Սակայն նոյն ինքն չունի իրաւունք ամենեւին այն ընչից վրայ, զորոնք ժառանգք տրամադրած կամ գործածած են:

Յօդ. 144. — Եթէ կրնն կամ ժառանգք կամ պահանջատարք բացակային պնդեն անոր մեռած ըլլալը, եւ իրենց խօսքին ապացոյցներ մատակարարեն, դատարուն իրեւ պաշտպան նորին, պիտի անուանէ գործակալ մը անոր ինչքը մատակարարելու համար:

Ի պակասութեան գործակալ մատակարարի, դատարուն ի պաշտօնէ պիտի անուանէ պաշտպան մը՝ որուն գէմ պիտի ուղղուի եւ պիտի ապացուցուի վկայներով մահուան կարծիքն:

Մ Ա Ս Ն Ե Բ Կ Բ Ո Ր Գ

ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ՏՐՄԱԴՐՈՒԹԻՒՆԲ

Յօդ. 145.— Որպէս զի ժառանգ մը կարենայ յաջորդդ էական պայմանքն են.

1. Յայտնութիւն ընական կամ կարծեալ մահուան հեղինակին :

2. Յայտնութիւն իրական կամ կարծեալ գոյութեան ժառանգին :

3. Ծանօթութիւն աստիճանի ազգակցութեան ժառանգի յարաբերութեամբ առ հեղինակին, եւ ծանօթութիւն տեղւոյն, ուր կը գտնուին ինչք ժառանգութեան :

Յօդ. 146.— Ժառանգութիւնն պէտք է որ կատարէ հետեւեալ պարտաւորութիւնները.

1. Վճարել հանգուցելոյն յուղարկաւորութեան եւ թաղման ծախքերը :

2. Հատուցանել ծանուցեալ պարտքերը մնացեալ ընչից ամբողջութեան վրայ :

3. Գործադրել հանգուցելոյն կտակը մնացեալ ժառանգութեան երրորդ մասին վրայ յետ վճարման պարտուց :

4. Եթէ ժառանգութիւնն ծանրաբեռնեալ չըլլայ նկատմամբ երրորդ անձանց, օրինականապէս ճանչցուած ժառանգաց բաժինները բաշխել, եթէ աւելի ինչ կայ : Եթէ միմիայն ըլլայ ժառանգն, ժառանգութեան մնացեալ ինչքն անոր կը փոխանցին, միայն թէ այր եւ կին չըլլայ որոնք իրենց օրինական բաժինը միայն կրնան առնուլ :

Յօդ. 147.— Ժառանգք տասն դասու կը բաժնուին ըստ հետեւեալ կարգի.

1. Օրինաւոր⁽¹⁾ ժառանգ, որուն օրէնքն կը սահմանէ ժառանգութեան մէկ մասը քարտ :

(1) Légitime.

2. Ընդհանուր ժառանգ հայրական, որ կը ժառանգէ ժառանգութեան մնացորդը, յետ կանխաւ բաժնաւոր զօրինաւորան, եթէ կան օրինաւորականք⁽¹⁾, կամ բոլորը կը ժառանգէ ի պակասութեան նոցին :

3. Ժառանգ հանգուցելոյն իրաւամբ տէրութեան⁽²⁾, որ կը ստացուի զօրութեամբ փրկանաւորութեան⁽³⁾ :

4. Ընդհանուր ժառանգք տեսն⁽⁴⁾, որք կը ժառանգեն ի փրկանաւորեալ անձէ⁽⁵⁾ օրէնքէն հրամայեալ պայմանաց համեմատ :

Նկատմամբ փրկանաւորեալ անձին, ինքն երբեք չժառանգեր իւր Տիրոջմէն :

5. Եթէ ըստ ինքեան օրինաւորական եւ ընդհանուր ժառանգներ չըլլան, մնացորդն ժառանգութեան կը փոխանցի այն ժառանգաց, որ փոխանցութեան իրաւունք ունին :

6. Մերձաւոր ազգականքն Չառույ-արհամ, որք կը ժառանգեն ի պակասութեան փոխանցութեան ի նորո՞ս օրինաւորականաց եւ ընդհանուր ժառանգաց :

7. Մատուա-եյ-մուալան կամ տէրն՝ որ ընկալեալ է անձանօթ ծննդեամբ անձէ մը զօրութեամբ փոխադարձ դաշնադրութեան, որով ընկալուչն ժառանգ կը կարգէ զընկալեալն ի փոխարինութիւն վճարման դրամական պատժոյ, ի զիպուածի՝ յորում ընկալուչն ո՞ճիր մը գործած ըլլայ՝ որուն համար այդպիսի պատուհասով պատժուի :

8. Որ եւ է անձ՝ որ իբր եղբայր կամ իբր հօրեղբայր ճանչցուած է, իրաւունք ունի ժառանգելու այն անձը, որ զինքը այսպէս ճանչցած է, եթէ մեռնի առանց ժառանգաց, բաց յամուսնոյ, եւ եթէ յետ չկուզէ մահուանէ առաջ :

Յայտ՝ զիպուածի ծանուցեալ անձն կ'առնու ժառանգութեան մնացորդը, յետ կանխաւ ի բաց բաժնաւոր կնոջ պատկանեալ օրինաւորականն :

9. Կտակագրին բոլոր ընչից հրիտակառու, ի պակասութեան ժառանգաց, կ'առնու բոլոր ժառանգութիւնը յետ կանխաւ ի բաց բաժնաւոր կենդանի կնոջ օրինաւորականն :

(1) Légitimaire.

(2) Patronage.

(3) Affranchissement.

(4) Patron.

(5) Affranchi.

10. Վերջապէս, ի պահասութեան որոյ եւ է ժառանգի, ժառանգութիւնն կը փոխանցի Պէյթ-էլ-Մալին կամ հասարակաց գանձուն, որ կը արամադրէ ըստ իրաւանց :

Գ Լ Ո Ի Խ Բ .

ԱՅՆՊԻՍԻ ԴԻՊՈՒԱԾՈՑ ՎՐԱՅ ՅՈՐՍ ԱՆԱՐԺԱՆ ԵՒ ԱՆՆԵԴՈՒՆԱԿ Կ'ԸԼԼԱՅ ՄԷԿ ՄԸ ԺԱՌԱՆԳԵԼՈՒ

Յօդ. 148.— Անընդունակ է ժառանգելու ո՛ր եւ է անձ՝ որոյ վիճակն ազատ չէ :

Յօդ. 149.— Անարժան է ժառանգելու ո՛ր եւ է անձ, որ կամաւ կամ ակամայ, խորհրդածութեամբ կամ առանց խորհրդածութեան իւր հեղինակին կենաց դէմ դաւաճանած է (1) :

Անարժան չին ժառանգելու՝

Ով որ գործածած է նկատմամբ հեղինակին համապատիժ հատուցման(2) կամ չափի իրաւունքը :

Ով որ զանհիկայ սպաննած է օրինաւոր պաշտպանութեան զիպուածին մէջ :

Ով որ անուղղակի պատճառ եղած է անոր մահուան :

Կրտսեր կամ խելագար սպաննողն :

Յօդ. 150.— Տարբերութիւնն կրօնի կը բառնայ քրիստոնէին՝ մահմէտականը ժառանգելու իրաւունքը եւ փոխադարձաբար :

Սակայն մահմէտականն կրնայ ժառանգել իւր ուրացող ազգականէն՝ նախ քան չուրացութիւն ստացեալ ինչքը :

Յետ ուրացութեան ստացեալ ինչք յուրացողէ՝ Պէյթ-էլ-Մալին կը փոխանցին :

Եթէ ուրացողն կին ըլլայ, ամենայն ինչք նորին, որ ստացեալ են ուրացութենէն առաջ կամ յետոյ, կը փոխանցին մահմէտական ազգականին :

Յօդ. 151.— Հօսդիս(3) կոչուած անձն՝ որ կը բնակի մահ-

(1) Attenter.

(2) Droit du talion.

(3) Etranger.

մէտական գաւառներուն մէջ, անընդունակ է ժառանգելու իւր Զիւմին կամ մահմէտական իշխանութեան հպատակ մը :

Նոյնը պէտք է ըսել Հօսդիս կոչուած անձին վրայօք՝ որ մահմէտական գաւառներէն դուրս կը բնակի, ուրիշ Հօսդիս կոչուած անձին՝ որ նոյն գաւառաց մէջ կը բնակի :

Մահմէտական գաւառաց մէջ բնակեալ Հօսդիսին պատկանեալ ինչք կը պահուին օտար գաւառաց մէջ բնակող ժառանգաց համար :

Գ Լ Ո Ի Խ Գ .

ՕՐԻՆԱԻՈՐ ԺԱՌԱՆԳԱՅ ՎՐԱՅ ԵՒ ԱՆՈՆՑ ՕՐԻՆԱԻՈՐ ԲԱԺՆԻՆ ՎՐԱՅ

Յօդ. 152.— Ժառանգութիւնն կը փոխանցի կամ օրինաւորական իրաւամբ կամ ընդհանուր իրաւամբ :

Օրինաւոր բաժինքն, որոց ժառանգք կրնան իրաւունք ունենալ, են

Կէս, չորրորդ, ութերորդ, երկու երրորդ, երրորդ մասն ժառանգութեան :

Օրինաւոր մասին իրաւունք ունեցողներն են

Հայրն, հայրական հաւն որոյ եւ է աստիճանի, համամայր եղբայրն, այրն, կինն, դուստրն, հարազատ քոյրն, յորդուց ծնեալ թոռն, որ եւ է աստիճանի, արեւակից քոյրն, համամայր քոյրն, մայրն եւ հայրական մամն :

Կէս (մասն ժառանգութեան) կը սեփականի հինգ ժառանգաց, այսինքն

1. Առն, ի զիպուածի մահուան կնոջ, առանց որդիք կամ յորդուց ծնեալ թոռունք թողլու :

2. Միակ դուստրն՝ որ ծնեալ ըլլայ ի նոյն իսկ հեղինակէ (Պէնդ-էլ-սուլա) :

3. Դուստր որդւոյն, եթէ չկայ ուրիշ դուստր մը՝ որ ուղղակի ժառանգ ըլլայ :

4. Հարազատ քոյրն, եթէ միակ է :

5. Արեւակից քոյրն, եթէ միակ է :

Յօդ. 153.— Չորրորդ (մասն ժառանգութեան) կը սեփականի երկու ժառանգաց, այսինքն

1. Առն, եթէ կինն որդի մի կամ թոռն մի ունի յորմէ եւ է աստիճանէ :

2. Այրի կնոջ կամ այրի կանանց հանգուցեալ առն, որ սերունդ չունի :

Ութերորդ (մասն ժառանգութեան) կը արուի այրի կնոջ կամ այրի կանանց հանգուցելոյն ի համընթացութեան որդւոց կամ թոռան :

Յօդ. 154.— Երկու երրորդ (մասն ժառանգութեան) կը սեփականին չորից ժառանգաց .

1. Երկու կամ առաւելագոյն ուղղակի դստերց .
2. Դստերց որդւոց ի պակասութեան ուղղակի դստերց .
3. Հարազատ քերց, եթէ միայնակ են .
4. Արեւակից քերց, ի պակասութեան հարազատ քերց եւ դստերց որդւոց :

Յօդ. 155.— Երրորդն կը սեփականի երկու ժառանգաց .

1. Հանգուցելոյն մօր, եթէ սա որդիք կամ թոռուք կամ քորք չունի, յայսմ զիպուածի մայրն ժառանգութեան մնացորդին երրորդ մասը կ'առնու յետ տալոյ զօրինաւոր բաժին կենդանի ամուսնոյ :

2. Երկու կամ առաւելագոյն համամայր եղբարց կամ քերց :

Յօդ. 156.— Վեցերորդն կը սեփականի իբրեւ օրինաւոր բաժին վեց ժառանգաց, այսինքն .

1. Հօրն կամ հայրական հաւին որոյ եւ է աստիճանի, եթէ հեղինակն թողած է որդի կամ թոռն յորմէ եւ է աստիճանէ, կամ եթէ երկու կամ աւելի քորք կամ եղբարք կան :

3. Հայրական մամուն կամ մամուց կամ մարց հաւուն :

4. Համամայր եղբօր կամ քեռ , եթէ ուրիշ համընթացող ժառանգ չկան :

5. Դստեր որդւոյն, ի համընթանալ ուղղակի դստեր :

6. Արեւակից քեռ, ի համընթանալ հարազատ քեռ :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՈՒՐԻՇ ԺԱՌԱՆԳԱՅ՝ ՕՐԻՆԱԻՈՐԱԿԱՆԱՅ ՇԵՏ
ՀԱՄԸՆԹԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Յօդ. 157.— Հօր համար՝ երեք զիպուածք կը ներկայանան համընթացութեան օրինաւորականաց ընդ միւս ժառանգս .

1. Եթէ հանգուցեալն որդի մի կամ թոռն մի ունենայ, հայրն վեցերորդ մասը կ'առնու իբրեւ օրինաւոր բաժին :

2. Եթէ ուղղակի դուստր կամ յորդւոյ ծնեալ թոռն կայ, հայրն կ'առնու, բայց ի վեցերորդ մասէն, զմնացորդն ժառանգութեան, յետ տալոյ զբաժինս միւս համընթացողաց :

3. Ի պակասութեան որդւոց, հայրն կ'առնու բոլոր ժառանգութիւնը իբր օրինաւորական եւ ընդհանուր ժառանգ, յետ բաձնալոյ զօրինաւոր բաժին այրի կնոջ, եթէ կայ :

Յօդ. 158.— Հայրական հաւն՝ հօր նոյն եւ նման իրաւունքն ունի, ի պակասութեան նորին, ի բաց առեալ հետեւեալ զարտուղութիւնները .

1. Հանգուցելոյն հօրը մայրը՝ ի բաց կը մերժուի ի հօրէ, բայց կը համընթանայ ընդ հաւուն :

2. Եթէ հանգուցեալն իբր ժառանգ թողած է հայրը, մայրը եւ մէկ ամուսին մը, մայրն կ'առնու չորրորդ մասն մնացորդին, յետ բաձնալոյ ամուսնոյն բաժինը . եթէ հանգուցեալն թողած ըլլայ հաւը փոխան հօր, մայր հանգուցելոյն բոլոր ժառանգութեան երրորդ մասը կ'առնու :

3. Տիրոջ հայրն, ի ներկայութեան իւր որդւոյն, բացառութեամբ հաւուն, փրկանաւորեալ անձէ թողեալ ընչից վեցերորդ մասը կ'առնու :

Ի ներկայութեան հօր, հարազատ եղբարքն կամ արեւնակիցքն եւ հաւն կը մերժուին ի ժառանգութենէ . բայց եղբարքն կը ժառանգեն ի ներկայութեան հայրենական հաւուն :

Յօդ. 159.— Ժառանգական իրաւունք եղբարց կամ համամայր քերց եռատեսակ է .

1. Եղբարքն կամ համամայր քոյրն վեցերորդ մասին իրաւունք ունի :

2. Եթէ բաղմամբիւ եղբարք կամ համամայր քորք կան՝ երրորդ մասը կ'առնուն՝ որ կը բաժնուի ի հաւասար մասունս :

3. Ասոնք ի բաց կը մերժուին յորդուոց կամ ի թոռանց կամ ի դստերց թոռանց՝ որ յորդուոց ծնեալ ըլլան, ինչպէս նաեւ ի հօրէ եւ ի հայրենական հաւէ :

Յօդ. 160.— Ամուսին այրն՝ կէսը կ'առնու, եթէ հանգուցեալ կինն որդիք կամ թոռունք չունենայ : Ուրիշ որ եւ իցէ զիպուածի մէջ չորրորդ մասը կ'առնու :

Յօդ. 161.— Ի պակասութեան որդուոց եւ թոռանց՝ որ ծնեալ են յորդուոց, կինն կամ կանայքն, եթէ բաղմամբիւք են, չորրորդ մասը կ'առնուն, իբրեւ օրինաւոր բաժին :

Ի Համընթացութեան որդուոց կամ թոռան, որ ծնած ըլլայ յորդուոց, այրի կինն կամ կանայք ութերորդ մասը կ'առնուն :

Յօդ. 162.— Ուղղակի ժառանգ եղող դստերց համար երեք զիպուածք կրնան ներկայանալ :

1. Եթէ դուստրն միակ է, կէսը կ'առնու :

2. Եթէ դստերքն բաղմամբիւք են, երկու երրորդ մասունքը կ'առնուն, զոր կը բաժնեն իրենց մէջ ի հաւասար մասունս :

3. Ի համընթացութեան ուղղակի ժառանգ եղող որդուոց կամ դստեր, որդին դստեր բաժնին կրկնապատիկը կ'առնու :

Դստերքն ընդհանուր ժառանգք կ'ըլլան որդուոց համընթացութեան համար :

Յօդ. 163.— Դստերք որդուոց իբրեւ ուղղակի դստերք են՝ վեց զիպուածք կը ներկայանան իրենց նկատմամբ :

1. Երբոր մի միայն դուստր կայ, ասիկայ ժառանգութեան կիսոյն իրաւունք ունի :

2. Երբոր բաղմամբիւ են դստերքն, երկու երրորդը կ'առնուն :

3. Նոքին իսկ վեցերորդ մասը կ'առնուն, եթէ համընթանան ուղղակի դստեր մը հետ :

4. Ի բաց կը մերժուին, եթէ երկու ուղղակի դստերք ըլլան :

5. Եթէ նոյն դստերք (որդուոյն) համընթանան հաւասար կամ ստորին աստիճանի արու թոռան մը հետ, յորում զիպուածի ընդհանուր ժառանգք կ'ըլլան թոռան համընթացութեան համար, այս թոռն իւրաքանչիւր դստեր կրկնապատիկը կ'առնու :

6. Նոյն դստերքն բոլորովին ի բաց կը մերժուին համընթացութեամբ ուղղակի որդուոց հանգուցելոյն :

Յօդ. 164.— Հարազատ քորք կը ժառանգեն հետեւեալ կերպիւ :

1. Եթէ մի միայն ըլլայ քոյրն, կէսը կ'առնու :

2. Եթէ երկու կամ առաւելագոյն են՝ երկու երրորդ մասունքը կ'առնուն :

3. Ի համընթացութեան հարազատ եղբարց հետ, եղբարքն դստերց կրկնապատիկը կ'առնուն :

4. Համընթացութեամբ հարազատ եղբօր, հարազատ քորքն ընդհանուր ժառանգք կ'ըլլան եւ ժառանգութեան մնացորդը կ'առնուն, համընթանալով ուղղակի դստեր մը հետ կամ հանգուցելոյն որդիէն ծնեալ դստեր մը հետ :

Յօդ. 165.— Արեւակից քորքն իբրեւ հարազատ քորք են՝ կը ժառանգեն հետեւեալ կերպիւ :

Եթէ մի միայն է քոյրն, կէսը կ'առնու :

Եթէ երկու կամ առաւելագոյն են եւ հարազատ քոյրեր չունին, երկու երրորդ մասունքը կ'առնուն. նոքին իսկ վեցերորդ մասը կ'առնուն համընթանալով մի միայն հարազատ քեռ հետ :

Նոքին իսկ արեւակից քորք ի բաց կը մերժուին համընթացութեամբ հարազատ քերց, միայն թէ արեւակից եղբայր մը չըլլայ, որ զիրենք ընդհանուր ժառանգ ընէ :

Արեւակից քորք վեցերորդ մասը կ'առնուն, երբոր համընթանայ ուղղակի դուստրն կամ որդուոց դուստրն :

Յօդ. 166.— Հարազատ եւ արեւակից եղբարքն եւ քորք ի բաց կը մերժուին յորդուոց կամ յարու թոռանէ որ եւ է աստիճանի եւ ի հօրէ :

Արեւակից եղբարք եւ քորք ի բաց կը մերժուին ի հարազատ եղբօրէ եւ ի հարազատ քեռէ, ի համընթացութեան ուղղակի դստեր կամ դստեր յորդուոց :

Յօդ. 167.— Մօր համար երեք զիպուածք համընթացութեան կը ներկայանան :

1. Ինքն վեցերորդ մասը կ'առնու, իբրեւ որոշ օրինաւոր բաժին, երբոր որդի մը կամ որոյ եւ է աստիճանի արու թոռն կայ, եւ երբոր բաղմամբիւ եղբարք կամ քորք կան :

2. Նոյն ինքն ամբողջ ժառանգութեան երրորդ մասը կ'առնու ի պակասութեան վերոյիշեալ ժառանգաց, կամ մնացորդին երրորդը, յետ բաճնալոյ ամուսնոյն եւ հօր օրինաւոր բաժինը :

Յօդ. 168.— Ժառանգութեան վեցերորդ մասը կը պատ-

կանի հայրենական կամ մայրենական մամուն, թէ՛ մի միայն ըլլայ սնիկայ թէ՛ աւելի նոյն աստիճանէն :

Մերձաւորագոյն աստիճանք ի բաց կը մերժեն հեռաւորագոյնները . այսպէս ներկայութիւն մօր՝ ի բաց կը մերժէ հայրենական կամ մայրենական մամերը . հօր մայրն ի բաց կը մերժէ հայրենական մամերը , եւ հայրենական հաւուն մայրն ի բաց կը մերժէ նոյնպէս հայրենական մամերը , ի բաց առեալ հօր մայրը, որ կը համընթանայ հայրենական հաւուն հետ . վերջապէս ժառանգ եղող մամն ի բաց կը մերժէ հայրենական եւ մայրենական հաւուն մամերը :

Հայրենական մամն ի միջէ կողմանէ միայն՝ կը բաժնէ վեցերորդ մասը երկու կողմանէ ազգական եղող մամուն հետ, ի հաւասար մասունս :

Գ Լ Ո Ի Խ Ե .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՌԱՆ ԳԱՅ ՎՐԱՅ (ԱԶԷՊ)

Յօդ. 169. — Ընդհանուր ժառանգ է որ եւ է անձ՝ որ միակ կը սեփականէ ամբողջ ժառանգութիւնը, կամ մնացորդ՝ յետ բաճախոյ օրինաւորական մասունքը, ի զիտուածի համընթացութեան օրինաւորականաց :

Կրկնատեսակ են ընդհանուր ժառանգք. ընդհանուր ժառանգ հայրենական, եւ ընդհանուր ժառանգ զօրութեամբ տէրութեան :

Հայրական ընդհանուր ժառանգը երեք դասու կը բաժնուին, այսինքն

1. Ընդհանուր ժառանգ իրեն համար.
2. Ընդհանուր ժառանգ ուրիշին համար.
3. Ընդհանուր ժառանգ ուրիշի մը հետ :

ՀԱՅՍԽ Ա. — Այն բնդնաւոր ժառանգաց վրայ՝ որք այսպիսիք են իրենց համար :

Յօդ. 170. — Ընդհանուր ժառանգ է իրեն համար որ եւ է անձ՝ որ պէտք չունի ուրիշին համընթացութեան ժառանգական իրաւունքը ստանալու համար եւ կապեալ չէ՛ հանգուցելոյն, կանանց միջոցաւ :

Այս դասս ժառանգաց կրկին կը բաժնուի չորս դասու , ըստ հետեւեալ կարգի նախադասութեան .

1. Հանգուցելոյն օրդին, օրդոց օրդին եւ այսպէս յաջորդաբար իջնալով աստիճանաւ սերնդոց :

Այսպէս եթէ մէկ մը մեռնի մի միայն օրդի թողով , աւելիայ կ'առնու բոլոր ինչքը ընդհանուր ժառանգի տիտղոսի :

2. Ի պակասութեան օրդոց . կը ժառանգէ հայրն , ի պակասութեան հօր՝ հայրական հաւն, եւ այսպէս յաջորդաբար ելլալով աստիճանաւ նախահարց :

Եթէ մէկ մը մեռնի ժառանգ թողով հայրը կամ հայրական հաւը եւ օրդի մի , ժառանգութեան վեցերորդ մասը կը պատկանի, իբրեւ օրինաւոր բաժին, հօր կամ հայրական հաւուն եւ մնացորդն օրդոյն՝ տիտղոսի ընդհանուր ժառանգի :

3. Հարազատ եղբարք, արենակից եղբարք, արու սերունդք հարազատ եղբարց եւ արենակից եղբարց , եթէ չկայ հայր կամ հայրական հաւ :

Եթէ հանգուցելոյն իբր ժառանգ թողու հայրը կամ հայրական հաւը հարազատ կամ արենակից եղբօր մը հետ , հայրն կամ հաւն կ'առնու բոլոր ժառանգութիւնը տիտղոսի ընդհանուր ժառանգի , ըստ որում հայրն կամ հաւն ունի զնախադասութիւն , ի պակասութեան օրդոց :

4. Հարազատ հօրեղբայրն , արենակից հօրեղբայրն , որդիք հարազատ հօրեղբօր եւ օրդիք արենակից հօրեղբօր , ի պակասութեան հարազատ կամ արենակից եղբօր կամ եղբօր-օրդոց :

Եթէ հանգուցելոյն հարազատ կամ արենակից հօրեղբայր թողու եւ մէկ հարազատ կամ արենակից եղբայր , ժառանգութիւնը կը պատկանի նախադասութեամբ հարազատ եղբօր :

Եթէ հարազատ կամ արենակից հօրեղբայրն համընթանայ հօրեղբօրօրդոյ մը հետ , ժառանգութիւնն հօրեղբօր կը պատկանի :

Ապա կուգան հարազատ եղբայր հօր հանգուցելոյն , արենակից հօրեղբայր նորին , որդիք հարազատ հօրեղբօր , եւ որդիք արենակից հօրեղբօր յորմէ եւ է աստիճանէ , ի պակասութեան հարազատ հօրեղբօր կամ օրդոց նորին :

Հարազատ հօրեղբայրն հայրական հաւուն՝ նախադաս է արենակից հօրեղբօր հաւուն :

Որդիք հայրենական հարազատ հօրեղբօր կը նախադասեն

որդուց հայրենական հարազատ հօրեղբոր , եթէ հաւ չկայ , եւ այսպէս անսահմանաբար :

Յօդ. 171. — Երբոր ազգականութիւնն տարբերի աստիճանօք , նախադասութիւնն իրաւանց տեղի ունի ըստ մերձաւորութեան աստիճանի :

Այսպէս որդին նախադաս է թոռան , հայրն կամ հայրենական հաւն նախադաս է եղբոր :

Մէկ կամ միւս սեռի ժառանգն , որ ազգական է յերկուց կողմանց նախադաս է անոր՝ որ ազգական է միայն մէկ կողմանէ :

Այսպէս հարազատ եղբարք կը նախադասուին արեւակից եղբարց . հարազատ քոյրն , ի համընթացութեան ընդ ուղղակի դասեր կամ ընդ դասեր որդույ . նախադաս է արեւակից եղբոր , որդին հարազատ եղբոր ի բաց կը մերժէ արեւակից եղբոր որդին . հարազատ հօրեղբայրն ի բաց կը մերժէ արեւակից հօրեղբայրը :

Այս տրամադրութեան մերձենալի է եղբորորդուց հօր հանգուցելոյն եւ եղբորորդուց հաւու հանգուցելոյն :

ՀԱՏԱԾ Բ. — Ուրիշ ազգականի համար
ընդհանուր ժառանգաց վրայ :

Յօդ. 172. — Չորեքին անձինք իգական սեռի՝ ընդհանուր ժառանգք կ'ըլլան երբոր կը գանուին ուրիշ ազգականի մը հետ , եւ իբրեւ օրինաւոր բաժին կ'առնուին կէսը կամ երրորդը ըստ դրութեան իւրեանց :

Այս անձինքս են ուղղակի դասերք , դասերք որդույ , հարազատ քորք եւ արեւակից քորք :

Այս չորս դասերէն ամէն մէկն , պէտք ունի , ընդհանուր ժառանգ ըլլալու համար , համընթացութեան եղբոր մը կամ անձին՝ որ իրենց մէջ եղբոր տեղը բռնէ :

Դուստրն պարզ բաժին կ'առնու եւ որդին կրկին բաժին :

Յօդ. 173. — Օրինաւոր բաժին չունեցող կինն՝ որ կը համընթանայ Աջեպ կոչուած եղբոր մը հետ , այս համընթացութեան համար ժառանգ չըլլար :

Այսպէս հարազատ հօրեղբոր մը քոյրն անոր հետ չժառանգեր :

Նոյն տրամադրութեամբ կ'ընթացուի նկատմամբ որդուց արեւակից հօրեղբոր մը ի համընթացութեան ընդ դասեր արեւակից հօրեղբոր մը , եւ նկատմամբ արու թոռան ի համընթացութեան էգ թոռան :

ՀԱՏԱԾ Գ. — Ուրիշ ժառանգի մը հետ
ընդհանուր ժառանգաց վրայ :

Յօդ. 174. — Երբոր հանգուցեալն երկու քոյր ունենայ , մին հարազատ եւ միւսն արեւակից , անոնց ամէն մէկն ընդհանուր ժառանգ կ'ըլլայ , մինչ համընթանայ հանգուցելոյն դասեր կամ ուղղակի դասերց հետ կամ որդուց մէկ կամ բազմաթիւ դասերց հետ :

Յօդ. 175. — Տարբերութիւն՝ ընդ մէջ ընդհանուր ժառանգաց ուրիշի մը համար եւ ընդհանուր ժառանգաց ուրիշի մը հետ , յայտ կը կայանայ որ Աջեպ կոչուած ընդհանուր ժառանգն ուրիշի համար կլինայ միակ ընդհանուր ժառանգ ըլլալ , մինչդեռ ուրիշի հետ ընդհանուր ժառանգն չկրնար միակ ընդհանուր ժառանգ ըլլալ :

ՀԱՏԱԾ Դ. — Ազատելոյն ժառանգութեան մէջ
տիրոջ ունեցած իրաւանց վրայ :

Յօդ. 176. — Եթէ ազատելոյն ժառանգութեան մէջ օրինաւորական կամ ընդհանուր ժառանգք չըլլան , տէրն՝ տիրադոսիւ ընդհանուր ժառանգի , կը նախադասի ազատելոյն Չառուիլարկամ կոչուած մերձաւոր ժառանգաց եւ այն ամէն ժառանգաց՝ որք իրաւունք ունին ազատելոյն ժառանգութեան մնացորդին , թէպէտեւ տէրն հրաժարած ըլլայ յիւր իրաւանց խնամակալութեան :

Եթէ տէրն մեռած ըլլայ , ազատելոյն ժառանգութեան իրաւունք ունին ընդհանուր արու ժառանգքն՝ որք ուղղակի ազգական են տեսան , ըստ կարգի սահմանելոյ նկատմամբ ընդհանուր ժառանգի՝ որ իրեն համար Աջեպ կը կոչուի :

Սակայն որդին տեսան , ի պակասութեան սորին , կ'առնու ազատեալ հանգուցելոյն ժառանգութիւնը , երբոր անժառանգ

մեռնի անիկայ . նոյնպէս որդի որդւոյն , ի պակասութեան որդւոյ , եւ այսպէս հետեւաբար :

Յետոյ կըզայ հայրն կամ հաւն տեառն որ եւ է աստիճանի , եւ այսպէս հետեւաբար , բացառութեամբ ընդհանուր ժառանգաց , որ կը ժառանգեն ուրիշին համար կամ ուրիշին հետ :

Որ եւ է անձ ծառայական կարգի ազատ կ'ըլլայ ստացմամբ իւր ազգականին , եւ նորին տէրութեան կ'ենթարկուի : Ի դիպուածի մահուան նորին առանց ժառանգի , ժառանգութիւն կը պատկանի տեառն , եւ ի պակասութեան նորին՝ իւր արու ժառանգաց :

Յօդ. 177. — Կինն իրաւունք չունի ազատեալ անձին ինչքը ժառանգելու , ի բաց առեալ զդիպուածն , յորում ինքն ազատէ , կամ տէրութեան իրաւունք ստացած ըլլայ ազատելոց վրայ՝ իւր ազատեալէն , կամ անոնց վրայ՝ զորս սերունդք այդ ազատելոց ազատած են եւ այսպէս հետեւաբար :

Երբոր ազատեալն՝ ազատող կնկանէ ուրիշ ժառանգ չթողլով մեռնի , ժառանգելու իրաւունքն կը պատկանի այդ կնկան եւ իրեն օրինաւորական եւ ընդհանուր արու ժառանգաց , ըստ կարգի՝ զոր սահմանեցինք այր տեառն վրայ :

Գ Լ Ո Ի Խ Զ .

Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԵՆԷ ՄԵՐԺՄԱՆ ՎՐԱՅ

Յօդ. 178. — Մերժումն է վիճակ ժառանգի՝ որ կը զրկուի ըստ բոլորին կամ ըստ մասին ժառանգելու իրաւունքէն ուրիշ ժառանգի մը ներկայութեան համար :

Մերժումն երկատեսակ է . առաջինն կը կայանայ յայտ որ ժառանգն ենթարկի , փոխան բարձրագոյն իրաւանց , ստորնագոյն իրաւանց :

Այսպիսի է ամփոփումն ի չորրորդ մասն կիսոյ , որ պիտի պատկանի ամուսնոյն , եթէ կինն որդի մը թողու . ամփոփումն յութեւրորդն չորրորդին՝ որ կը պատկանի կնկան , եթէ այրն որդիք թողու . ամփոփումն ի վեցերորդն , որդւոյ մը համար՝ թացութեան համար , ի բոլորէ՝ որ պատկանի առ հայրն , կամ յերրորդէ որ պատկանի առ մայրն հանգուցելոյն :

Երկրորդն կը կայանայ ի կատարեալ զրկման ժառանգի իրաւանց ժառանգութեան :

Այսպէս որդի հօրեղբօր մերժեալ է բոլորովին ի ներկայութեանէ եղբօր հանգուցելոյն :

Էօդ. 179. — Վեց ժառանգք չեն ենթարկեալ կատարեալ զրկման եւ են հայրն , մայրն , որդին , ուղղակի դուստրն , այրն եւ կինն :

Ամփոփման ձեւով պատահած մերժումն հինգ ժառանգաց սեփական է , մօր , դստեր որդւոյն , արեւակից քեռ , առն եւ կնոջ :

Յօդ. 180. — Հայրն բոլորովին ի բաց կը մերժէ հաւը ժառանգութեան նկատմամբ տեղի ունեցած այլ եւ այլ դրութեանց մէջ , նոյնպէս եւ մայրն ի բաց կը մերժէ հայրական կամ մայրական մամը :

Յօդ. 181. — Որդին ի բաց կը մերժէ զորդի որդւոյն , եւ թոռն ստորնագոյն աստիճանի ի բաց կը մերժուի ի թոռանէ բարձրագոյն աստիճանի :

Հարազատ կամ արեւակից եղբարք եւ քորք ի բաց կը մերժուին ի հօրէ եւ ի հայրական հաւէ , յորդւոյ եւ ի թոռանէ որոյ եւ է աստիճանի :

Յօդ. 182. — Արեւակից եղբայրն ի բաց կը մերժուի ի հօրէ , յորդւոյ , ի թոռանէ , ի հարազատ եղբօրէ եւ ի հարազատ քեռէ , որ Աջեպ կը համարի ուրիշ ընդհանուր ժառանգին հետ :

Յօդ. 183. — Հարազատ եղբօր մը որդին ի բաց կը մերժուի յեթն ժառանգաց , ի հօրէ , ի հայրական հաւէ , յորդւոյ որդւոյն , ի հարազատ եղբօրէ , ի հարազատ քեռէ , եթէ ասիկայ Աջեպ ըլլայ ընդհանուր ժառանգի մը հետ :

Յօդ. 184. — Արեւակից եղբօր մը որդին ի բաց կը մերժուի վերոյիշեալ եօթն ժառանգներէն եւ եւս յորդւոյ հարազատ եղբօր :

Յօդ. 185. — Արզանդակից եղբարք⁽¹⁾ ի բաց կը մերժուին վեց անձինքներէ , ի հօրէ , ի հայրական հաւէ , յորդւոյ , յորդւոյ որդւոյն , յուղղակի դստերէ եւ ի դստերէ որդւոյն :

Յօդ. 186. — Հարազատ հօրեղբայրն ի բաց կը մերժուի կնն ազգականներէ , ի հօրէ , ի հայրական հաւէ , յորդւոյ որդւոյն ,

(1) Ծնեալք ի միջէ մօրէ , բայց ո'չ ի միջէ հօրէ :

ի հարազատ եղբորէ, յարենակից եղբորէ, ի հարազատ քեռէ, յարենակից քեռէ, երբոր քորք կ'ունենան իրենց հետ ընդհանուր ժառանգ ազգական մը եւ որդի հարազատ կամ արենակից եղբոր :

Յօդ. 187.— Հարազատ հօրեղբոր որդին ի բաց կը մերժուի նախընթաց երկու յօդուածոց մէջ նշանակեալ ժառանգներէն, եւ ի հարազատ հօրեղբորէ : Իսկ որդին արենակից հօրեղբոր ի բաց կը մերժուի ի նոյն ազգականաց եւ յորդուոյ հարազատ հօրեղբոր :

Յօդ. 188.— Որոյ եւ է աստիճանի դասերք որդուոյ ի բաց կը մերժուին, երբոր երկու կամ առաւելագոյն ուղղակի զստերք կ'առնուն ժառանգութեան երկու երրորդ մասունքը, միայն թէ միացած չըլլան նոյն կամ ստորնագոյն աստիճանի որդուոյ որդուոյն հետ, յորում զիպուածի որդի որդուոյն զանոնք ընդհանուր ժառանգ կ'ընէ իրաւամբ մասնակցելու ընդ ուղղակի դատերս, ի բաց մերժելով որ եւ է դուստր պատկանեալ ստորնագոյն աստիճանի քան զորդի որդուոյն :

Յօդ. 189.— Եթէ հարազատ քորք ընդունին ժառանգութեան երկու երրորդ մասունքը, ոչինչ պէտք է տալ արենակից քերց, միայն թէ ասոնք չունենան արենակից եղբայր մը, որ իրենց ընդհանուր ժառանգաց յատկութիւնը ընծայէ :

Յօդ. 190.— Հարազատ քոյրն, որուն կը պատկանի ըստ օրինականի ժառանգութեան կէտը, արենակից քոյրերը չմերժեր, որոնք վեցերորդին իրաւունք ունին,

Յօդ. 191.— Երկրորդ գլխոյն մէջ նշանակեալ պատճառաց մէկուն համար ժառանգութենէն մերժեալ ժառանգն ո՛չ զոք ի ժառանգաց ի բաց կը մերժէ. բայց ուրիշ ազգականի մը հետ համընթացութեան համար մերժելի ժառանգն կրնայ մասնականապէս ի բաց մերժել ուրիշ ժառանգները, եթէ ժառանգելու իրաւունք ունենայ :

Նոյնպէս ի հօրէ մերժեալ եղբարք եւ քորք վեցերորդի կը վերածեն երրորդ բաժինը, որն որ առանց համընթացութեան նոցա, մօրը պիտի պատկանէր :

Գ Լ Ո Ւ Խ Է .

ԱՅԼԵԻԱՅԼ ԴԻՊՈՒԱԾՈՅ ՎՐԱՅ, ՈՐՔ ԿՐՆԱՆ ՊԱՏԱՀԻԼ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ.

Յօդ. 192 — Յղութեան զիպուածին մէջ պիտի պահուի յանուն յղացելոյն այն մեծագոյն մասն, որ պիտի պատկանէր արուին համընթացութեամբ էզին, եթէ յղացեալն վերաբերի այնպիսի աստիճանի, որ համընթանայ ներկայ ժամանակաց, կամ զանոնք ի բաց մերժէ մասնականապէս :

Եթէ յղացեալն վերաբերի այնպիսի աստիճանի՝ որ բոլորովին ի բաց մերժէ ներկայ ժառանգները, բոլոր ժառանգութիւնն պիտի մնայ ի պահեստի մինչեւ որ ծնանի անիկայ :

Ի զիպուածի բաժանման կը պարտաւորին բաժանակիցք երաշխաւորութիւն տալ :

Յղացեալն ժառանգ կ'ըլլայ, եթէ կենդանի ծնանի, կամ եթէ իւր մարմնոյն մեծագոյն մասը կենդանի ելլայ մօրը արգանդէն :

Այնպիսին ի պահեստի դրուած բոլոր բաժինը կ'առնու, եթէ անոր իրաւունք ունի, ի հակառակ զիպուածի կ'առնու իրեն պատկանած մասը եւ մնացորդն կը բաժնուի իրաւատեարց մէջ :

Յօդ. 193 . — Պէտք է ի պահեստի մնայ բացակային պատկանեալ մասն, երբոր կենդանութիւն կամ մահ նորին տղիտացեալ է :

Եթէ բացակայն բոլորովին ի բաց մերժէ ներկայ ժառանգակիցները, պէտք է յապաղի բաժանումն ժառանգութեան : Եթէ ի բաց մերժէ զանոնք միայն մասնաւորապէս, անոնց ամէն մէկուն կը տրուի այն փոքրագոյն մասն, որ պիտի պատկանի անոնց ի ժառանգութեան :

Ի զիպուածի՝ յորում բացակային մահը յայտարարող վճիռ արուի, յետ ներկայանալոյ ի դատաստան ժամանակակցաց նորին, ամենայն ինչք նորին կը պատկանին կենդանի մնացեալ ժառանգաց, վճռէն առաջ մեռեալ ժառանգք ժառանգութեան չեն մասնակցիր, ինչպէս ըսուեցաւ ի 577 . յօդ :

Յօդ . 194 . — Երկսեռական անձն կը ժառանգէ իրրեւ այր կամ իրրեւ կին , ըստ առաւելագոյն արտայայտեալ երեւոյթի նշանաց՝ որ յատուկ են մի կամ միւս սեռի : Եթէ կրկին սեռի նշանքն հաւասարապէս արտայայտեալ ըլլան , այնպիսին նուազ նպաստաւոր բաժինը կ'առնու , որ մի կամ միւս սեռի պիտի պատկանէր :

Յօդ . 195 . — Շնութեան կամ նզովից երդման պատճառաւ չճանչցուած որդիք , ինչպէս նաեւ անոնց մայրերն կամ մարց ազգականներն , կը ժառանգեն փոխադարձաբար : Բայց նոյն իսկ որդիք իրենց հօրմէն չեն ժառանգեր , ինչպէս եւ հայրն որդւոց չժառանգեր :

Յօդ . 196 . — Նաւարեկութեան կամ կործանման կամ հրդեհի մէջ վախճանեալ ազգականք , երբոր դրականապէս չգիտցուիր որուն առաջ մեռած ըլլալը , մէկզմէկէ չեն ժառանգեր , եւ ինչք նոցին կը պատկանին կենդանի մնացեալ ժառանգաց :

Յօդ . 197 . — Թախարում անուանուանեալ իրաւանց լքումն⁽¹⁾ , կամ իրաւախոհութիւն որոշեալ իրի մը վրայ ընդունելի է ժառանգաց մէջ՝ անոնց հաւանութեամբը :

Լքումը ընդունող⁽²⁾ ժառանգն՝ լքանող⁽³⁾ ժառանգին տեղը կը բռնէ , իրրեւ լքումն եղած չըլլայ :

(1) Cession .
(2) Cessionnaire ,
(3) Cédant .

Գ Լ Ո Ւ Խ Ը .

ԱՄՓՈՓՄԱՆ ԵՒ ՅԱԿԵՆՈՒԱԾԱԿԱՆ⁽¹⁾

ԲԱԺԱՆՄԱՆ ՎՐԱՅ

Առաջ , կամ ամփոփումն օրինաց (օրինական մասանց) տեղի ունի երբոր բազմաթիւ ըլլան ժառանգք , եւ ժառանգութեան ինչք անբաւական ըլլան ամբողջապէս հատուցանելու բոլոր օրինականները :

Յօդ . 198 . — Յաւելուածական բաժանումն տեղի ունի երբոր օրինականները հատուցանելէն յետոյ , մնացորդ մը ըլլա , առանց ընդհանուր ժառանգի , որ կարենայ ստանձնել զայն :

Այն ժամանակ աւելորդն այն կը բաժնուի համեմատաբար ընդ մէջ օրինաւորականաց , բացառութեամբ ամուսնոց :

Այսպիսի օրինաւորականքն են , արգանդակից եղբայրն՝ ուղղակի դուստր որդւոյն , հարազատ արեւակից եւ արգանդակից քոյրն , մայրն եւ մամն հայրական հանգուցելոյն :

Վերոյիշեալ օրինաւորականներէն մէկն միայն ըլլալով բոլոր մնացորդը կ'առնու :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

« Զառու-Արկամ » կոչուած ժառանգ ազգականաց վրայ

եւ անոնց դուրեան վրայ ի ժառանգուրեան .

Յօդ . 199 . — Զառու-Արկամ կոչուած ժառանգք չորս դասու կը բաժնուին , եւ իրենց կարգը հետեւեալ տրամադրութիւններէն սահմանեալ է :

Առաջին դասն կը բովանդակէ որ եւ է ազգական՝ որ միացեալ է ընդ հանգուցելոյն միջոցաւ դստեր , կամ դստեր

(1) Supplémentaire .

որդոյն եւ սերնդոց նոցին անսահմանաբար , որ եւ է սեռի պատկանին :

Յօդ. 200. — Երրորդ դասն կը պարունակէ զնախահարս հանգուցելոյն՝ որք զրկեալ են ի ժառանգութենէ, զոր օրինակ հաւերը , մեծ հաւերը , մամերը եւ մեծ մամերը՝ որոյ եւ է աստիճանի :

Յօդ. 201. — Երրորդ դասը կը կազմեն հարազատ եւ արեւնակից կամ արգանդակից սերունդք եղբարց եւ քերց, որոյ եւ է աստիճանի վերաբերեալք :

Յօդ. 202. — Չորրորդ դասն կը բաղադրի ի մօրեղբարց , յարգանդակից հօրեղբարց , ի մօրաքերց եւ ի հօրաքերց եւ ի նոցին սերնդոց կրկին սեռի, որոյ եւ է աստիճանի վերաբերին :

Բոլոր ժառանգութիւնն իրաւամբ կը պատկանի միոյ միայնոյ կենդանի ժառանգի, ի պակասութեան ուրիշ ժառանգակցաց ի չորս դասս :

§. Ա. Առաջին դասու (Զառու-Արկամ) ժառանգաց վրայ :

Յօդ. 203. — Այս դասու Զառու-Արկամ ժառանգաց մէջ մերձաւորագոյնն հանգուցելոյն՝ ի բաց կը մերժէ յետագայ աստիճանի ժառանգը . այսպէս ուղղակի դստեր զուստրն կը նախադասուի որդւոյ դստեր դուստր թողան :

Եթէ նոյն աստիճանի ազգականք համընթանան , նախադաս կ'ըլլայ այն անձն՝ որ կապեալ է հանգուցելոյն այնպիսի ազգականի մը միջոցաւ , որ ժառանգ պիտի ըլլար , եթէ հանգուցեալէն յետոյ մեռնէր :

Այսպէս որդւոյ էգ թողան, դստեր էգ թողան նախադաս է :

Եթէ ամենայն ժառանգք հաւասար աստիճանի ըլլան եւ ո՛չ ոք ի նոցանէ իջնայ այն անձէն՝ որ ժառանգ պիտի ըլլար , եւ կամ եթէ ամէնքն ալ իջնան ի ժառանգաց , բաժանումն (ժառանգութեան) կ'ըլլայ ըստ գլխոց , յարգելով միշտ արուաց իրաւունքն առ կրկինն՝ ի համընթացութեան ընդ էգս :

Բաժանումն (ժառանգութեան) կ'ըլլայ ի հաւասար մասոնն , եթէ ժառանգք վերաբերին նոյն սեռի :

Այս տրամադրութիւնս մերձենալի է եւս եւ այն զիպուածոյն , յորում ամենայն նախորդ ծնողք ժառանգաց նոյն սեռի ըլլան :

Եթէ նախորդ ծնողք վերաբերին այլեւայլ սեռի՝ բաժանումն (ժառանգութեան) կ'ըլլայ ըստ ցեղից , հիմն բռնելով բաժինները , որ պիտի պատկանէին նախորդ ծնողաց , եթէ կենդանի մնային հանգուցեալէն յետոյ :

§. Բ. Երկրորդ դասու (Զառու-Արկամ) ժառանգաց վրայ :

Յօդ. 204. — Երկրորդ դասու Զառու-Արկամ ժառանգաց մէջ մերձաւորագոյնն հանգուցելոյն՝ առաջնութիւն կը վայելէ միւսներուն վրայ , որ եւ է աստիճանի վերաբերին անոնք . այսպէս մեծ մասն երրորդ աստիճանի ի բաց կը մերժէ մեծ հաւն չորրորդ աստիճանի , առանց նկատողութեան սեռի միջնորդական ազգականաց :

Եթէ Զառու-Արկամ ժառանգք նոյն աստիճանի ըլլան եւ միայն մէկ մը անոնցմէ բաժնուած ըլլայ ի հանգուցելոյն այն ազգականի միջոցաւ , որ ժառանգ պիտի ըլլար , կը բաժնուի ժառանգութիւնն առանց նկատողութեանն միջնորդական ազգականի :

Եթէ նոյն աստիճանի վերաբերին , միջնորդական ազգականաց կամ ամէնքն ժառանգք կ'ըլլան կամ ամէնքն ժառանգք չ'ըլլան , ժառանգութիւնն կը բաժնուի ըստ ցեղից . երկու երրորդ տալով այն ժառանգաց՝ որոց իրաւունքն յառաջ կուգայ ի հօրէ հանգուցելոյն , եւ մէկ երրորդ տալով ազգականաց յօր :

Եթէ միջնորդական ազգականք նոյն աստիճանի ըլլան կը բաժնուի ժառանգութիւնն ըստ գլխոց :

Ի բաժանումնս պէտք է յարգել արուաց արտօնութիւնը այս իմաստով որ անոնք էգերուն բաժնին կրկինը առնուն :

§. Գ. Երրորդ դասու (Զառու-Արհամ)

ժառանգաց վրայ :

Յօդ. 104. — Այս դասուն մէջ մերձաւորագոյնն հանգուցելոյն նախագաս է ի ժառանգութեան :

Եթէ նոյն աստիճանի Զառու-Արհամ ժառանգաց մէջ որդւոց որդի մը ըլլայ, որ ընդհանուր ժառանգ պիտի ըլլար, սոյն ժառանգն նախագաս կ'ըլլայ սերնդոց անձին՝ որ ժառանգ չպիտի ըլլայ :

Եթէ նորին աստիճանի ամենայն ժառանգք՝ միոյ ընդհանուր ժառանգի սերունդք են, կամ եթէ ամենքն եւս չեն սերունդք ընդհանուր ժառանգի, կամ եթէ անոնցմէ ոմանք սերունդք ըլլան օրինաւորական ժառանգի, եւ ոմանք սերունդք ըլլան ընդհանուր ժառանգ եղող ազգականի, ժառանգութիւնն կը բաժնուի ըստ ցեղից, ի նկատողութիւն առնելով զորպիսութիւն միջնորդականի :

§. Դ. Չորրորդ դասու (Զառու-Արհամ)

ժառանգաց վրայ :

Յօդ. 206. — Այս դասուն մէջ, եթէ համընթանան ազգականք մի եւ նոյն հայրական կամ մայրական գծի, նախագաս են անոնք՝ որոց զօդն ազգականութեան զօրաւորագոյն է, այս իմաստով որ հարազատք նախագասին արեւակցաց, եւ արգանդակցաց որոյ եւ է սեռի :

Եթէ զօդն ազգականութեան մի եւ նոյն է, բաժանումն (ժառանգութեան) կ'ըլլայ ըստ գլխոց, պահելով միշտ արուաց արածնութիւնը կրկին առնելու :

Եթէ այլեւայլ գծերու վերաբերին, չիք նախագասութիւն ի շնորհս զօրաւորագոյն զօղի ազգականութեան :

Բաժանումն կ'ըլլայ երկու երրորդ բաժինները հայրենի ազգականաց տալով, զոր օրինակ հարազատ հօրքրոջ, եւ երրորդ բաժինը մայրենի ազգականաց տալով, զոր օրինակ մօրքրոջ :

Յօդ. 607. — Չորրորդ դասու սերնդոց մէջ որոյ եւ է գծի մերձաւորագոյնն հանգուցելոյն նախագաս է հեռաւորաց նորին աստիճանի եւ նորին կողման. հարազատքն կը նախագասին արեւակցաց եւ ասոնք կը նախագասին արգանդակցաց :

Երբոր զօդն աստիճանի, գծի եւ զօրութեան հաւասար է, Աջեպն նախագաս է : Այսպէս հօրեղբօրէ ծնած էգ հօրեղբօրորդւոյն եւ մօրքեռէ ծնած արու մօրքեռորդւոյն մէջ՝ առաջինն՝ որ Աջեպ է ի բաց կը մերժէ երկրորդը՝ որ Աջեպ չէ :

Երբոր աստիճանն հաւասար է եւ գիծն տարբեր, բացառական նախագասութիւն տեղի չունի ո՛չ ի շնորհս Աջեպ յատկութեան. ժառանգութիւնն կը բաժնուի երկու երրորդ մասունքը հայրենի կողման ազգականին տալով, եւ մէկ երրորդը մայրենի կողման ազգականին սեփականելով :

Վ Ե Ր Զ



14667

2013

« Ազգային գրադարան



NL0047516

